21-27 ՄԱՐՏ 2024 ՀԻՆԳՇԱԲԹԻ 009(5791)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Ֆաշիստ Ալիեւի խոստովանությունը

**Ալիեւը** Նովրուզի կրակը մարտի 19-ին Ստեփանակերտի կենտրոնում վառելով, տեսախցիկի առջեւ ելույթ է ունեցել: «Կանգնած եմ երբեմնի պառլամենտի շենքի տեղում, որ անջատականներն էին կառուցել: Այն չկա, իբր այս մեկը բավարար չէր, երկրորդի հիմքերն էին դրել Շուշիում, այժմ այդտեղ Շուշիի հինգաստղանի հյուրանոցն է, իսկ փետրվարի 26-ին Խոջալուի հուշահամալիրի քարը հիմնարկեքեցինք»: Վերակրկնելով, թե «հիմնահատակ կործանել է այսպես կոչված խորհրդարանի շենքը` սատանայի որջը եւ նրան կից ահաբեկչական կազմակերպության շինությունը», Ալիեւը վերստին խոստովանել է իր ցեղասպան քաղաքականության մասին` ելույթը եզրափակելով` «Նովրուզի կրակը վերջնականապես մարում է» արտահայտությամբ: Ֆաշիզմի վկայություն, որ չի վրիպել X հարթակում BBC-ի թղթակից Emilio Cricchio-ի, միջազգային իրավունքի մասնագետ Dustin Hoffmann-ի ուշադրությունից:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ի՞նչ է պատահում, երբ անձնական մոլուցքը հակադրվում է պետական շահին

Պետական կառավարման ասպարեզում կան երկու ոլորտներ, որոնք ազգային անվտանգության եւ դիվանագիտական ծառայությունների հետ միասին հանդիսանում են յուրաքանչյուր նորմալ կառավարության ֆինանսական գլխավոր մարտահրավերը` տրանսպորտ եւ կրթություն: Երկուսն էլ հսկայական միջոցներ պահանջող ոլորտներ, որոնց ֆինանսավորումն ու պտասարկումը անխուսափելի պարտականությունն է երկրի կայուն զարգացմանը ձգտող ամեն մի կառավարության համար: Առաջինը` տրանսպորտը, շարժիչ ուժն է երկրի, իսկ երկրորդը` կրթությունը, գրավականը տնտեսության հեռանկարային զարգացման: Խուսափում չկա: Եթե կառավարություն ես, պիտի վերցնես այդ իսկապես ծանր բեռը, եթե չես կարող, ապա պիտի քաշվես մեկ կողմ ու տեղդ զիջես ուրիշին, առանց տրտնջալու, առավել եւս` առանց **մունաթ** գալու:

Ու քանի որ երկրիս ղեկավարը սիրողական մակարդակով անգամ չի տիրապետում կառավարման հմտություններին, ավելի շուտ` տիրապետում է այնքան, որքան իր թերթն էր ժամանակին ղեկավարում, այսինքն շանտաժով, գործ տալով ու փող առնելով, այժմ գանգատվում ու փորձում է, օրինակ, արգելել քաղաքացիներին դեպի օդակայան իր չսարքած ճանապարհները օգտագործել, **մուննաթ** գալով դրանց վերանորոգման եւ սպասարկման վրա այդքա՜ն փող ծախսելու համար: Փաստորեն, 6 տարվա ընթացքում կարեւոր ոչ մի ճանապարհ չսարքած անձը ձգտում է պարտքի տակ դնել նույն ճանապարհների իսկական տիրոջը` ժողովրդին, մյուս կողմից միջնադարյան հարկահանության մերօրյա դասեր տալով բոլորիս:

Եվ քանի որ, մյուս կողմից, նույն անձին երախտամոռության պատճառով ժամանակին թույլ չեն տվել համալսարանն ավարտել, այժմ նա բառի իսկական առումով մուռ է հանում բոլոր ԲՈՒՀ-երից` մեծ, փոքր, միջին, կրթական, գիտական, առողջապահական ու գեղարվեստական, հատկապես սեւեռվելով դրանց ռեկտորների, պրոռեկտորների ու մանավանդ` դեկանների ու նրանց տեղակալների վրա: Ախր չէ՞ որ Պետհամալսարանից նրա հեռացումը պահանջվել է այժմ հանգուցյալ դեկանի կողմից, իսկ հաստատումը` նախկին ռեկտորի:

Եվ այս բոլորը` բուհերի խոշորացման, միաձուլման, այսպես կոչված` օպտիմալացման ու պետական միջոցների խնայողության անվան տակ, հեռվում, շա՜տ հեռվում ուրվածգելով «Ակադեմիական քաղաք» կոչվող հեքիաթը, այն էլ` Աշտարակ քաղաքի տարածքներում, որտեղ համապատասխան ոչ մի ենթակառույց չկա, ո՛չ ճանապարհ, ո՛չ շենքեր, կացարաններ, ո՛չ էլ անհրաժեշտ ուրիշ կառույցներ:

Ախր հարցնող լինի. ո՞նց ես դու երկրի տարբեր վայրերից 40-45 հազար ուսանող երիտասարդությանը, նրանց 8-10 հազար դասախոսներին ու մյուս աշխատակիցներին Երեւանի փոխարեն ժամը ժամին հասցնելու այդ ուտոպիկ «քաղաք» ու հետ բերելու, ո՞ր մայրուղով կամ, ինչպես այլ երկրներում, արագընթաց գնացքներով:

Հոգ չէ, ասում է նա, այդ բոլորը կսարքենք: Ի՞նչ գումարներով: Գումարը, ասում է նա, կհայթայթենք վարձակալության փողերից: Ինչի՞ վարձակալության: Երեւանում այժմ գործող եւ մայրաքաղաքի լավագույն դիրքերը գրավող հին ու հնացած շենքերը միջազգայի՜ն ընկերությանը ղեկավարման տալով: Իսկ «միջազգայինը» ի՞նչ է անելու: Վարձով կտա կառուցապատողներին (developers) կամ հյուրանոցատերերին: Իսկ մինչեւ «Ակադեմիական քաղաքի» կառուցապատումը ի՞նչ են անելու գործող մեր ԲՈՒՀերը: Միմյանց գիրկը կնստեն կամ ծոցը ու յոլա տանեն: Արդեն մրցակցային մակարդակի կրթություն չեն տալիս, իսկ Բժշկական համալսարանը կեղծ դիպլոմներ է տալիս ու տարբեր երկրների հետ գլխացավային իրավիճակներ է ստեղծում մեզ համար:

Սեփական կրթահամակարգը վատաբանելու, վարկաբեկելու նման երկրորդ օրինակ չե՛ք գտնի: Վատաբանում` որին ի շարս այլոց ենթարկվում է նաեւ, ուղղակի կամ անուղղակի, մեր փառապանծ կրթական օջախը` Կոմիտասի անվան կոնսերվատորիան, որի շրջանավարտ մեր նոր եւ նորագույն երգիչ-երգչուհիները, կատարողական մյուս արվեստների ներկայացուցիչներն ու կոմպոզիտորները Եվրոպայում թե այլուր հաղթողի դափնեպսակի են արժանանում միջազգային հեղինակավոր մրցույթներում, փայլում մեծահամբավ բեմերում ու համերգասրահներում, նաեւ գովասանքի խոսքեր ստանում մասնագիտական իրենց կրթության մակարդակի համար, բայց վատաբանվում են ղեկավարի կողմից մի երկրի, որի առաջատար «փափուկ ուժն» է հանդիսանում մեր կոնսերվատորիան` ի չգոյե «կոպիտ կամ պինդ» որեւէ ուժի:

Այսքան մոլուցք, այսքան հետեւողականություն` դարերի ընթացքում ժողովրդի ստեղծածը, ունեցվածքը, հրաշալի ժառանգությունը արհամարհելու եւ քանդելու, անհանդուրժելի է:

Բայց առավել անհանդուրժելին նրան ու նրա քանդիչ խմբակին հանդուրժելն է:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Իմանանք թշնամու ռազմական ներուժը

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Չգիտեմ, թե Տավուշից սահմանազատում եւ սահմանագծում սկսելու պարագան ի՞նչ կապ ունի չորս գյուղ միակողմանի հանձնելու հետ, եւ ինչո՞ւ սահմանագծում եւ սահմանազատում չի նշանակում նույն տարածքի` Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող հայկական հողերի (օրինակ` Ջողազի ջրամբարին հարակից բերրի արոտավայրերը, որոնք Բերքաբեր գյուղինն են) վերադարձ, առնվազն` փոխանակում: Կամ` չգիտեմ ինչու պետք է մարդ մտածի, թե անվտանգություն ապահովող բուֆեր տարածքը հանձնելով եւ Տավուշի պաշտպանությունը խոցելի դարձնելով` ադրբեջանցու ախորժակը կզսպվի իբր խաղաղության օրակարգով: Ի՞նչ են թաքցնում իբր Ադրբեջանին պատկանող գյուղերի վերադարձման մասին ֆուֆու խոսակցությունները, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական խաղաղության օրակարգին աջակցող լայնֆորմատ միջազգային շատախոսությունը: Թե բա` ԵՄ քսանյոթ երկրի արտգործնախարար աջակցում են Հայաստանին ու խաղաղության օրակարգին: ՆԱՏՕ-ի **Ստոլտենբերգն** էլ հետը եւ ուրիշ զանազան բոնոներ ու միշելներ.... կարգին օդի տատանում են առաջացնում, ինչպես Արցախի տեղահանումից առաջ էր, խոսում շաղ տալիս: Բա մեկը չհարցնի՞, տո ա՛յ Ստոլտենբերգ, քո ի՞նչ գործն է, որ ինքնիշխան երկրին խորհուրդներ ես տալիս, թե ո՞նց վարվի իր դաշնակից երկրների հետ հարաբերություններում: Թե՞ այլեւս ինքնիշխան չենք:

Բայց այսօր որոշեցի քաղաքական վերլուծության փոխարեն ավելի օգտակար գործ անել, ու որ ասվում է, թե Տավուշի չորս գյուղը չտանք` պատերազմ կլինի, գյուղ տալ-չտալը սարքելով մանկապարտեզի մակարդակի «մեշոկ պապիով» (պատերազմով) վախեցնելու խոսույթ, եւ անգամ ՌԴ ԱԳ ներկայացուցչուհին է դա նկատում, թե սեփական ժողովրդին վախեցնելն ամենաճիշտ միջոցը չէ, ուզում ենք պատերազմի հավանականության առումով քողը մի փոքր հետ տանենք ու նայենք իրականության երեսին: Ի դեպ` հիմա ամեն օր այնքան բան է կատարվում, որ եթե երկու օրը մեկ վերլուծես` դրա կարիք կա: Բայց անցնենք մեր օգտակար գործին:

⇨7

## «Հնարավոր է նոր ցեղասպանության մեղսակից դառնանք»

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Գերմանիա

***Հայաստանին առնչվող ո՛ր թեմաները հետք գտան գերմանալեզու մամուլում այս վերջին օրերին: Դրանց` ստորեւ մատուցվող ընտրանին կարդալով, կարծում ենք , կհամաձայնեք, թե մի կողմից կարող ենք փարատել մեր տագնապները, երբ խոսքը Հայաստանը զբոսավայր դիտարկելն է, ուրեմն ապահով երկիր է, պատերազմի վտանգից հեռու, մյուս կողմից` իսկապես անհոգ չլինել, որ օրեցօր հոծ գծով է մամուլը ներկայացնում այն ուրվագիծը, որ Բրյուսել- Մոսկվա հակամարտության մեջ առաջինին մերձենալու ՀՀ մագնիսը կրկնապատկել է ուժը: Տագնապահարույցն այն փաստն է, որ դրա դիմաց չի ստանում անվտանգության երաշխիք: Ավելին` Շվեյցարիայի խաղաղ անկյունից նախազգուշացնում են, որ Հայաստանի գլխին կախված է նոր ցեղասպանության վտանգը: Լռելու չէ էլ… Աչքառու մի փաստ էլ` գերմանալեզու ԶԼՄ-ներում Արցախի, նրա բնակիչների վերադարձի թեման չի սպառվել: Ավելին` գալիք օրերին նոր միջոցառումներ են նախատեսված:***

Մարտի 19-ին ավստրիական «**Կուրիերը**» Հայաստանի մասին զովազդատեղեկատվական հոդված է հրապարակել` կցելով զբոսաշրջային մի փաթեթ, որի մեջ ընդգծված են Վարդավառի, խորովածի եւ գինու փառատոնային օրերը: «Հնադարյա մշակույթ, հիասքանչ բնություն եւ հումորով մարդիկ», այսպես է սկսում «Փոքր երկիր` մեծ անակնկալներով» վերնագրյալ հոդվածը լրատուն, առավելաբար ներկայացնում Հայաստանը` որպես քրիստոնեությունն առաջինն ընդունած պետություն, որի բնակչության առավել քան 92 տոկոսը Հայ եկեղեցու հավատավորներ են, նշում ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության մաս կազմող եկեղեցիների, Դիլիջանի, Գառնիի քարերի սիմֆոնիայի, Սեւանի, Արարատի մասին: Համեղ ծիրանի, այլ պտուղների, Արարատ անվանյալ դաշտավայրը Հայաստանի, նույնանուն ձյունապատ բիբլիական լեռը` 1922-ից Թուրքիայի սահմանում է, նշում է թերթը: (Բնականաբար նույնիսկ ակնարկ չկա բովանդակազուրկ` Արարա՞տ, թե՞ Արագած «ընտրությանը»):

Նույն օրվա գերմանական առցանց «**Ֆոկուսը**» Հայաստանի մասին իր հոդվածն այսպես է վերնագրել` «Ապագայում Մոսկվայի փոխարեն Բրյուսե՞լ. Հայաստանը հրաժարվում է ռուսական վճարային համակարգից և խորհում է ԵՄ-ին անդամակցելու մասին»:

⇨3

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Մեր աւագանին եւ մենք

Կը յիշեմ, տարիներ առաջ գրած էի այս նոյն սիւնակին մէջ, որ քաղաքի մը աւագանին ըլլալու է այդ քաղաքին սեռուցքը, այսինքն՝ անոր անդամները ըլլալու են քաղաքի առաջնակարգ, ժողովուրդին կողմէ ամենայարգուած դէմքերը իրենց բարոյականով, զարգացումով, փորձառութիւններով եւ այլն, սակայն երեւի այս ըսածս միայն տեսական է, քանի որ գործնականօրէն աւագանի կ՚ընտրուի ամենակարող անձը իր զանազան ասպարէզներու մէջ ունեցած հեղինակութեամբ եւ հմտութեամբ, առանց որ վերը թուածս պայմանները լրացնէ: Կարծեմ շատ երկիրներու մէջ ալ այսպէս է, սակայն կեդրոնանամ մեր, Երեւան քաղաքի քաղաքապետարանի աւագանիին վրայ:

Ես անձնապէս անոնցմէ ոեւէ մէկը չեմ ճանչնար, քանի տեղացի չեմ, սփիւռքահայ եմ, իսկ Երեւան հաստատուելուս տասը տարիները բաւարար չէին, որ ճանչնայի այդ մարդիկը, յատկապէս, որ անոնք չեն շփուիր պարզ ժողովուրդին հետ, քանի ունին իրենց յատուկ շրջանակն ու շրջապատը: Սակայն, երբեմն, երբ կը ցուցադրուին հեռատեսիլով, կամ նոյնիսկ գրպանի հեռախօսով, կը նայիմ եւ աւագանի չեմ տեսներ, այլ՝ դպրոցական դասարան մը յիշեցնող փոքր դահլիճ մը, ուր խելօք-խելօք շարուած են աշակերտները... Ներողութիւն, աւագները ըսել կ՚ուզեմ, ու մտիկ կ՚ընեն դասղեկին... դարձեալ ներողութիւն, քաղաքապետի ըսածներուն, կամ ուրիշ ելոյթ ունեցողներուն:

Վերջերս անոնց ժողովներէն մէկուն հաղորդումը դիտեցի քանի մը վայրկեան. կը քննարկէին երթեւեկութեան սակերը բարձրացնելու հարցը: Անմիջապէս անդրադարձայ, որ այս մարդիկը, վստահ եմ, իրենց սեփական մեքենաները ունին, որոնց համար ալ՝ յատուկ կայանելու տարածքները: Այս մարդիկը, որ աւտոբուս կամ թրոլէպուս չեն գործածեր, կանգառներուն ամառ-ձմեռ, յաճախ 30-40 րոպէ չեն սպասեր, բայց շարքային քաղաքացին խճողուած մեքենային մէջ երբեմն քիթ-քիթի, հազիւ ոտք դնելու տեղ կը գտնէ, բայց անձայն կը տանի այս անհամութիւնները, որպէսզի շուտ հասնի աշխատանքի, աշխատանքէն, իսկ ետքն ալ՝ շուտ հասնի տուն եւ հոգայ երեխաներուն ու ընտանիքին կարիքները. այս մարդիկը, որոնք հեռու են այս բոլորէն, ինչպէ՞ս պիտի որոշեն բան մը, որուն ծանօթ չեն:

Ընթացիկ 100 դրամը ոչինչ է, սակայն ամսական կտրուածքով գումար է վերջիվերջոյ: Հիմա եթէ 100-ը 200-ի պիտի բարձրացնեն (խօսք կայ 300-ի բարձրացնելու մասին), կը նշանակէ նախկին սակը պիտի կրկնապատկուի եւ եռապատկուի, բան մը՝ որ աշխարհի մէջ չէ պատահած: Տարիներ առաջ Անգլիոյ մէջ ցոյցերու ականատես եղայ, հարցուցի պատճառը, ըսին թէ պետութիւնը աշխատավարձերը 7% բարձրացուցեր է, իսկ սղաճը 7.5%-ի հասեր է, ժողովուրդը այդ 0,5%-ի համար կը պայքարի որ արդարութիւն ըլլայ, իսկ մենք ոչ թէ կէս առ հարիւր, այլ հարիւր առ հարիւր բարձրացնելու մասին կը մտածենք:

Այս երեւոյթը գրեթէ ամէն տեղ նոյնն է, այսինքն պատասխանատու մարդիկ որոշումներ կ՚առնեն հարցերու կապակցութեամբ, երբ իրենք այդ հարցերէն հեռու եղած են, գուցէ ծանօթ են, բայց չեն ապրած, իրենց մաշկին վրայ չեն կրած անոնց հետեւանքները:

Այստեղ ակամայ յիշեցի Սփիւռքի մեր կրթական հաստատութիւններն ու անոնց հոգաբարձուները, խնամակալները, կամ կրթականի յանձնախումբի անդամները, որոնք ընդհանրապէս շուկայի մարդիկ եղած են՝ վաճառականներ, արհեստաւորներ եւ այլն, որոնք ակադեմական կրթութիւն չեն ունեցած ընդհանրապէս եւ սակայն սիրով իրենց ժամանակը տրամադրած են դպրոցները պահպանելու համար, բայց միշտ շուկայի հաշիւով վարուած են ուսուցիչներուն հետ, աշխատած են որքան կրնան անոնց բեռը աւելցնել եւ փոխարէնն ալ աշխատավարձը նուազագոյնի հասցնել, որպէսզի դպրոցը բաց չունենայ. հոգ չէ թէ ուսուցիչը բաց ունենայ, բայց դպրոցը բաց չունենայ: Անշուշտ անոնց նպատակը բարի եղած է, սակայն այդ բարութիւնը սուղի նստած է ուսուցիչներուն վրայ:

Չեն մտածած, թէ սա մարդը քու տուածովդ ընտանիք կրնա՞յ պահել, չեն մտածած աւելցնել ուսուցիչին աշխատավարձը, որուն փոխարէն ձեւեր գտնեն նիւթական նոր աղբիւրներու, որոնք չեն պակսիր, քանի իսկապէս Եղեռն տեսած հայն ու իր զաւակներն ու թոռները միշտ ալ սիրով հոգացած են վարժարանի պէտքերը:

Վերադառնանք Հայաստան: Պետական այրերու աշխատավարձը եւ ուսուցիչներուն աշխատավարձը ի՞նչ համեմատութեամբ են, գիտէ՞ք: Ես մանրամասնութիւններէ տեղեակ չեմ, սակայն կը կարծեմ, որ պետական այր մը ուսուցիչի մը աշխատավարձին մօտաւորապէս տասնապատիկը կը ստանայ... եղա՞ւ: Լսած եմ, որ Ճափոնի մէջ ուսուցիչին աշխատավարձը հաւասար է նախարարի աշխատավարձին: Ինչո՞ւ, որովհետեւ անոնք կը հաւատան, որ ուսուցիչն է էականը, ա՛ն է, որ մա՛րդ կը պատրաստէ, մա՛րդ՝ որ բոլոր ասպարէզներուն մէջ իր ներդրումը ունի, ինչ որ կը սատարէ երկրին յառաջդիմութեան:

# Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վերաբացման հետեւանքները

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Թեհրանում պարապուրդի մատնված Ադրբեջանի դեսպանատան աշխատանքները վերսկսելու թեմային անդրադառնալու համար Բաքվից շուրջ մեկ տարի էր պահանջվելու:

Հիշեցնենք, որ նախորդ տարի հունվարի 27-ին Թեհրանում Ադրբեջանի դեսպանատուն ներխուժած ԻԻՀ քաղաքացին, «անձնական» դրդապատճառներից ելնելով կրակ էր բացել դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմի վրա, սպանելով դեսպանության անվտանգության ծառայության պետին:

Ադրբեջանի դեսպանատանը տեղի ունեցած միջադեպը «ահաբեկչություն» որակելու հարցում Բաքուն վայրկյան անգամ չհապաղեց եւ հայտարարեց Թեհրանից իր բոլոր դիվանագետների հետկանչման ու դեսպանության աշխատանքների դադարեցման մասին:

Մարտի 7-ին *Baku. TV*-ին տված հարցազրույցի ժամանակ, Բաքվում Իրանի դեսպան **Սեյեդ Աբբաս Մուսավին** վերջապես հայտարարեց, որ շուտով Ադրբեջանի Հանրապետությունը վերաբացելու է Թեհրանում իր դիվանագիտական ներկայացուցչությունը, որի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար Թեհրան է գործուղել հատուկ պատվիրակություն:

Այդ թեմային անդրադարձել է նաեւ ԻԻՀ ԱԳ նախարար **Ամիր-Աբդոլլահիանը**՝ Ջեդդայում կայացած «Իսլամական համագործակցության կազմակերպության» վեհաժողովի շրջանակներում Ադրբեջանի ԱԳ նախարար **Բայրամովի** հետ հանդիպումից հետո:

Ադրբեջանի դեսպանատան վերագործարկման մասին Իրանում հնչող տեսակետները տարբեր են: Ոմանց կարծիքով, արտահերթ նախագահական ընտրություններում հաղթանակած **Ալիեւը** փորձում է տարածաշրջանում ակտիվացնել իր արտաքին քաղաքականությունը եւ այդ ծիրի մեջ տեսնում նաեւ Թեհրանի հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը:

Սակայն Ադրբեջանի դեսպանատան աշխատանքների վերսկսման պատճառների ու հետեւանքների մասին Իրանի քաղաքական վերլուծաբանների հանրույթում շրջանառվում է նաեւ մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ Բաքուն ցանկանում է հավասարակշռված արտաքին քաղաքականության անվան տակ, Թեհրանի հետ հարաբերություններն ակտիվացնելուն զուգահեռ, ավելի խորացնել կապերը Թել Ավիվի հետ, ինչը Բաքվին հնարավորություն կտա տարածաշրջանում սեփական շահերին հետամուտ լինելու համար ձեռք բերել ավելի հզոր լծակներ: Այլ կերպ ասած, Ադրբեջանը փորձում է հավասարակշռող քաղաքականություն վարելու հարցում հետեւել Սաուդյան Արաբիայի օրինակին:

Ուշագրավ է նաեւ Թեհրանի ու Թել Ավիվի հետ հարաբերությունների համաժամանակյա կարգավորման մասին Բաքվի մտադրություններին անդրադարձած ամերիկյան *Newsweek*-ի հրապարակումը, համաձայն որի, Թեհրան-Բաքու հարաբերությունների բարելավումը դիտարկելի է միջազգային միջանցքների հատման եւ գերտերությունների, այդ թվում՝ Ռուսաստանի ու ԱՄՆ-ի հակասական շահերի բախման հանգույցում տեղի ունեցող տարածաշրջանային կարեւոր իրադարձությունների համատեքստում, ինչը չի կարելի համեմատել Բաքու-Թել Ավիվ հարաբերությունների հետ: Այնուամենայնիվ *Newsweek*-ի կարծիքով, Հարավային Կովկասում եւ դրա շուրջ տեղի ունեցող զարգացումները ի զորու են ուժեղացնել մրցակցությունն ու վնասելու կարգավորման փուլում գտնվող Բաքու-Թեհրան հարաբերություններին: Կայքէջը նաեւ հիշեցնում է նախորդ տարվա հոկտեմբեր ամսին բռնկված Գազայի պատերազմից մի քանի օր անց Իրանի տարածքով Ադրբեջանից Նախիջեւան կամ Արեւելքից Արեւմուտք ձգվող նոր մայրուղու կառուցման հեռանկարով Իրանի ու Ադրբեջանի միջեւ ստորագրված «Արաքսի միջանցք» կամ «Իրանուղի», կոչված համաձայնագրի մասին, որի նպատակն էր զսպել Հայաստանի տարածքով միջանցք բացելու Բաքվի ախորժակը:

Իրանաբնակ վերլուծաբաններից կարելի է առանձնացնել հայաստանցի ընթերցողին ծանոթ **Ահմադ Քազեմիին** ու **Ամիր Ալիփուրին**, որոնց համոզմամբ, երկկողմ հարաբերություններում Թեհրանին ընդառաջ գնալու եւ Թեհրանում Ադրբեջանի դեսպանատունը վերագործարկելու դիմաց Բաքուն փորձելու է ստանալ Թեհրանի լուռ համաձայնությունը՝ Իսրայելի հետ հարաբերություններն ավելի խորացնելու նպատակով, ինչը, վերլուծաբանի կարծիքով, Բաքվին հնարավորություն կտա «ազատագրված» Արցախի տարածքում ստեղծել հակաիրանական հենակետ:

Ալիփուրը նույնիսկ զգուշացնում է, որ Գազայի պատերազմն ավարտվելուց հետո Թել Ավիվն իր ուշադրությունը դարձնելու է դեպի Իրան, եւ քանի որ Իսրայելը խուսափում է Իրանի դեմ ուղիղ բախումից, ավելի շատ կենտրոնանալու է Իրանի հարեւանությամբ գտնվող Արցախի տարածքից Իրանի դեմ ահաբեկչական հարձակումներ իրականացնելու վրա:

Սակայն համոզված կարելի է ասել, որ Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վերաբացման հարցում Բաքվի շահագրգռվածությունն ավելի մեծ է քան՝ Թեհրանինը: Պատճառը դարձյալ «Իրանուղի» կոչված միջանցքից Բաքվի կախվածությունն է, որն առայժմ (եւ հուսանք՝ հետագայում նույնպես) Ադրբեջանից դեպի Նախիջեւան տանող եւ Իրանի կողմից վերահսկվող միակ ճանապարհն է լինելու:




## Կալանք քիչ են տալիս, բյուջե՝ շատ փող լցնում

**Բարձրագույն դատական խորհուրդը, որի նախագահին արդարադատության նախարար եղած ժամանակ հաճախ էր նայում Փաշինյանի՝ իր գլխավերեւում կախված նկարին, հաղորդագրություն է տարածել, թե «կիրառվող արդյունավետ պրակտիկայի շնորհիվ»՝ դատարանները որպես խափանման միջոց՝ կալանքն սկսել են ավելի քիչ կիրառել:**

**Դեպարտամենտն ուսումնասիրել է մինչեւ 2022-ի հուլիսը, այսինքն՝ մինչեւ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունների ուժի մեջ մտնելը եւ դրանից հետո եղած գործերն ու պարզել՝ կալանքի դեպքերը նվազել են 5.6 %:**

**Ոչ ոք չի քննարկում կամ քննադատում, որ դատարանը մեղադրյալին միանգամից չի կալանավորում, բայց բոլորին էլ պարզ է, որ դա, նախեւառաջ, բյուջե հավելյալ մուտքեր ապահովելու միջոց է: Գրավի դիմաց ազատության մեջ թողնելու գումարը ոչ թե մի քանի հազար, այլ մի քանի տասը հազար դոլարի է հասնում, իսկ դա, անխոս, ոչ բոլորին է հասանելի:**

**Ի դեպ, թիվ-թվաբանություն ներկայացնող ու դրանք գեղեցիկ փաթեթավորմամբ մատուցող ԲԴԽ-ն մոտ մեկ ամիս առաջ ռեպորտաժ էր նկարել այն մասին, թե ինչու են ձգձգվում քաղաքական աստառ ունեցող գործերը, օրինակ, «Մարտի մեկը»: Անդրեասյանի ղեկավարած կառույցը փնթփնթում էր դատավորների վարքագծից ու նրանց անուղղակիորեն մեղադրում «հասարակությանը հուզող գործերը» միտումնավոր տապալման տանելու մեջ:**

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Ընդդիմությո՞ւն եք, թե՞ սոցիալական աշխատող

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**, «խաղաղության դրոշը» ձեռքն առած, մոտ մեկ շաբաթ է՝ հասարակությանը հնարավոր ու անհնար բոլոր ձեւերով համոզում է, որ Հայաստանից նոր տարածքներ զիջելն անխուսափելի է: «Եթե չենք ուզում, որ ադրբեջանցին գա ու մեզ մորթի, պետք է ընդունենք ասածս, ու 4 գյուղերը հանձնենք՝ առանց ավելորդ աղմուկի». մոտավորապես նման տեքստ է հրամցնում մեր բոլորիս անվտանգության թիվ մեկ «երաշխավորը»:

Նրա՝ տալու մասին ձեռագիրը, իհարկե, նոր չէ. վերջին 4 տարվա ընթացքում խմբագրում ու խմբագրում է մեր երկրի քարտեզը՝ հօգուտ իր իսկ բնորոշմամբ՝ «կիրթ» **Ալիեւի**:



Առավել սոսկալի է ընդդիմության՝ «արխային» մնալու վարքագիծը, որ սոցիալական աշխատողի նման միայն արձանագրումներ է անում: Որ ամեն ինչ վատ է, հանձնելու դամոկլյան սուրն էլ՝ կախված բոլորիս գլխավերեւում, գիտակցում է ամեն ոք: Եվ ավելորդ անգամ դա ընդգծելու փոխարեն՝ գործել է պետք՝ հիմա՛ ու ամբո՛ղջ ուժով:

Ազգային ժողովում անդուլ տեքստեր ասելու կարիք չկա: Մարդիկ իսկապես հոգնել են այդ ամենից եւ ուզում են օր առաջ իմանալ՝ ո՞րն է իրենց անելիքը:

Տեսախցիկների առաջ իրար բզկտելու փոխարեն (արտերկիր մեկնելիս լա՜վ էլ քաղցր-մեղցր նկարներ եք հրապարակում, գուցե՝ շփվում եք) օրուգիշեր գլուխ ջարդեք, մտածեք, քննարկեք՝ ի՞նչ անել, ո՞ւմ դուռը թակել, ի՞նչ ծանոթ մեջ գցել, ինչպե՞ս համախմբել աշխարհասփյուռ հայերին, որ մոտ ապագայում դուք էլ բոլորիս հետ մեկտեղ չհայտնվենք վայ-հարեւանի ձեռքում:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# «Հնարավոր է նոր ցեղասպանության մեղսակից դառնանք»

⇨1

Մոսկվան շարունակում է մեկուսացված լինել, գրում է թերթը, ծանուցելով, թե ռուսական RBC գործակալության տվյալների համաձայն, հայկական բանկերի մեծ մասը ծրագրում է չընդունել ռուսական «Միր» վճարային համակարգի քարտեր: «Ֆոկուսը» սույն տեղեկությունը հրապարակել է՝ հղում տալով Newsweek հանդեսին: Visa-ն և Mastercard-ը դադարեցրին իրենց գործունեությունը ՌԴ-ում ուկրաինական պատերազմի պատճառով, իսկ փետրվարին ԱՄՆ-ը պատժամիջոցներ կիրառեց պետական վճարային քարտերի ազգային համակարգի նկատմամբ, որը «Միր» համակարգի օպերատորն է:

Սա մեծացրել է «Միր» քարտերի դերը Ռուսաստանում՝ դարձրել համաշխարհային վճարային համակարգերի այլընտրանք: «Հայաստանը կարծես ավելի է հեռանում Մոսկվայից, ԵՄ-ին անդամակցելու մտորումներն ավելանում են, գրում է առցանց «Ֆոկուսը»՝ հիշեցնելով թուրքական TRT-ին **Արարատ Միրզոյանի** տված հարցազրույցը, ինչպես նաեւ **Նիկոլ Փաշինյանի** France 24-ին եթերում ՀՀ-ի ՀԱՊԿ-ի անդամակցության սառեցման մասին հայտարարությունը: Կրեմլի կոշտ անդրադարձը գերմանական լրատուն ներկայացնում է դրա «սպասարկու» **Մարգարիտա Սիմոնյանի** արձագանքը մեջբերելով՝ հատուկ շեշտելով «քարոզիչ» Սիմոնյանի հայկական ծագումը: Վերջինս զգուշացնում է, որ եթե հայ ընտրողները շարունակեն աջակցել Փաշինյանին, «5 տարի հետո Հայաստան չի լինի»:

Մարտի 17-ին «**Վատիկան նյուզը**» գրում է հայկական վանքերի մասին, նշում, որ վանական իրական կյանք Հայաստանում չկա: Զբոսաշրջիկներն այցելում են, աշխուժություն կա, սակայն վանքերից ոչ բոլորը հոգեւոր սպասավոր ունեն: Հոդվածն առավելաբար կենտրոնանում է սուրբ Գրիգոր Լուսավորչի հիմնած սուրբ Գեղարդի վանական համալիրին: Այստեղ հոգեւոր ծառայությունն է մատուցում Գարեգին Երկրորդ կաթողիկոսի քարտուղար **Պարույր Ավետիսյանը**: 35-ամյա Հենրիկ Առաքելյանի մկրտությունն է վանքում, հյուրերը բազմաթիվ են, ինչը հուշում է նաեւ՝ մարտահրավերները շատ են, սակայն հայերի կապը եկեղեցու հետ ամուր է: Շվեյցարական «**Բլիքը**» մարտի 17-ին «Պետք է խստացնենք խոսքը» հոդվածում անդրադառնում է այն փաստին, որ դաշնության արտգործնախարար **Կասսիսը** Ադրբեջանի հարձակումից հետո ականջալուր չի եղել իր երկրի՝ ՀՀ-ում դեսպանի խորհրդին, թե պիտի հստակ հայտարարությամբ հանդես գա: Հոդվածագիրը հիշեցնում է, թե 2023-ին ՄԱԿ-ի ԱԽ հրատապ նիստի ժամանակ Հայաստանին սատարող հստակ ձեւակերպումներով հայտարարություն արեցին ԳԴՀ եւ Ֆրանսիայի ԱԳ նախարարները, իսկ Շվեյցարիան բավարարվեց «խիստ մտահոգություն» հայտնելով՝ Ադրբեջանի հարձակման մասին դատապարտող բառեր չհնչեցնելով: Հայաստանի հարցով Կասսիսի ամենակոշտ քննադատներից պատգամավոր **Շտեֆան Մյուլլեր-Ալթերմաթթը**, որ Շվեյցարիա-Հայաստան ընկերակցության համանախագահն է, «վրդովված է, որ արտգործնախարարը քծնում է Ադրբեջանին», իսկ «նրա ղեկավարած կառույցը միտումնավոր նվազեցնում վտանգը»: «Շատ վատ է, որ աշխարհը հետամուտ չեղավ եւ հայերն իրենց բնօրրանից բռնագաղթի ենթարկվեցին, ասում է պատգամավորը եւ աններելի համարում, որ Շվեյցարիան անտեսում է Հայաստանի գոյաբանական սպառնալիքը, վտանգված լինելու մասին նախազգուշացումները: «Եթե նորից անտեսենք, հնարավոր է նոր ցեղասպանության մեղսակից դառնանք», շվեյցարական «Բլիքին» փոխանցում է Մյուլլեր-Ալթերմաթթը՝ Շվեյցարիայի առանձնահատուկ պատասխանատվության մասին հիշեցնելով: Նրա դիտարկմամբ, «իր երկիրը հումքի առեւտրի կարեւոր կենտրոն է, ուր Ադրբեջանը ՌԴ-ի հետ ֆինանսավորում է իր ագրեսիվ քաղաքականությունը, իսկ մենք ենթարկվում ենք այդ նավթառաս պետությանը»:

Մարտի 19-ին ավստրիական կաթոլիկական **Kathpress**-ը ծավալուն հոդվածով անդրադարձել է Վիեննայի համալսարանում մարտի 14-ին կայացած «Քրիստոնեությունն Արցախում, պատմությունն ու մշակույթը» երեկոյին: («**Ազգի**» մարտի 7-ի համարում իրազեկել էինք դրա մասին- Ան. Հ.) «ԼՂ. Եկեղեցու զանգերի ղողանջը լռեցվել է» հրապարակումից տեղեկանում ենք, որ հայագետ **Յասմին Դում Թրագութը** (Զալցբուրգի համալսարան), Վիեննայի Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոս **Տիրան Պետրոսյանը**, Ավստրիայում ՀՀ դեսպան **Արմեն Պապիկյանը** ներկայացրել են Արցախի եւ Հայաստանի արդի մարտահրավերները՝ մասնավորապես նկատել տվել, որ 2024-ի տարեսկզբից Արցախի Հանրապետություն էլ գոյություն չունի, իսկ Հայաստանի հանդեպ առկա է Ադրբեջանի իրական ագրեսիա, ԼՂ-ում 4000 մշակութային հուշարձան անպաշտպան է: Այնքան ժամանակ, քանի դեռ Ադրբեջանի ագրեսիվ վարքի հանդեպ նրան որեւէ բանից չեն զրկում, չեն կանգնեցնում, Հարավային Կովկասում խաղաղություն չի լինի: Արցախի քրիստոնեական ժառանգությունը լիովին ոչնչացման սպառնալիքի տակ է: Դում Թրագութը զեկուցել է 2023-ի աշնանը ՀՀ-ում բռնագաղթից հետո ապաստանած 100 000 արցախցիների մասին, ինչպես նաեւ զգուշացրել, որ Ադրբեջանը կփորձի ռազմական առաջխաղացմամբ ՀՀ հարավով միջանցք ստանալ դեպի Նախիջեւան, մանավանդ վերջին տարիներին քանիցս հարձակվել է ՀՀ-ի վրա: Տիրան եպս. Պետրոսյանն Արեւմուտքից իր հիասթափության մասին է ակնարկել, որի հոգածության դաշտում միայն Ուկրաինան է, այնինչ մարդու իրավունքները բոլորին պիտի վերաբերվեն: Եպիսկոպոսը քննադատել է նաեւ ՌԴ-ին, որ Հայաստանին, Արցախին դավաճանել է: Դեսպան Պապիկյանն էլ փոխանցել է, թե տարածաշրջանում խաղաղության կարելի կլինի հասնել Ադրբեջանում քաղաքական փոփոխության պարագայում, քանզի այդ երկրի հասարակ քաղաքացիները վստահաբար պատերազմ չեն ուզում, սակայն տասնամյակներով այդ ուսմունքի ազդեցությունն են կրում: Դեսպանը դրական է գնահատել, որ հայ-ադրբեջանական սահմանին 2023 թվականից ԵՄ դիտորդական առաքելությունն է, սակայն դա բավարար չի համարել: Բոլոր բանախոսները միակարծիք են եղել, թե հակամարտությունը կրոնական վեճ չէ, ինչպես Ադրբեջանն է երբեմն ներկայացնում:



*Գերմանական հեռուստատեսության վավերագրությունից է նկարը՝ Ադրբեջանը գրավեց Արցախը, որի հանքերի շահառու են նաեւ գերմանացիները:*

Պրոֆեսոր Դում Թրագութը ներկաների ուշադրությունն է բեւեռել այն կարեւոր հանգամանքի վրա, որ հայ հասարակության մեջ չապաքինված Հայոց ցեղասպանության տրավման ավելի է խորանում: Տիրան եպիսկոպոս Պետրոսյանն էլ փաստել է՝ ԼՂ մայրաքաղաք Ստեփանակերտում Ադրբեջանը գլխավոր փողոցներից մեկն անվանափոխել է՝ Էնվեր փաշայի անունով կնքել: Եպիսկոպոսը հույս է հայտնել, որ ապագայում հնարավոր կլինի արցախցիների վերադարձը հայրենի տուն, եթե անվտանգության միջազգային երաշխիքներ լինեն: Դում Թրագութը քննադատել է Արեւմուտքի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի անգործությունը, որ 4000 մշակութային հուշարձան, այդ թվում մոտ 300 եկեղեցի վանք ու գերեզման մատնել է Ադրբեջանի քմահաճույքին: Բանախոսը ներկայացրել է ամերիկյան Կոռնելի համալսարանի՝ 2021-ից սկսյալ արբանյակային դիտարկումների պատկերները, ըստ որոնց 44 մշակութային հուշարձան արդեն ոչնչացված է, որոնց եկեղեցիներ էլ չկան, գերեզմանների հետքերը լիովին ջնջվել են: Սրանով ԼՂ-ի եւ նրա բնակիչների պատմությունն են խլում», ընդգծել է հայագետ Յասմին Դում Թրագութը:

Ավստրիայի գիտությունների ակադեմիայի պրոֆեսոր **Բենեդետտա Կոնտինը** հանգամանալից ներկայացրել է ԼՂ-ի պատմությունը՝ անտիկ շրջանից մինչեւ 19-րդ դարը: Նա հստակ նկարագրել է, որ քրիստոնեության արմատներն այդ բնակավայրում խիստ տեսանելի են 4-րդ դարում արդեն: Իսկ Յասմին Դում Թրագութն էլ հավելել է, որ 20-րդ դարասկզբին ԼՂ բնակչության մեծ մասը քրիստոնյա է եղել: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ մոտ 200 000 հավատացյալ, 220 եկեղեցի ու վանք է ունեցել, որ 1921-ին նախ տրվել է Հայաստանին, ապա՝ խորհրդային Ադրբեջանին: Ազգային զարթոնքի հետ 1989-ին արդեն Արցախի թեմն է ձեւավորվել, վերանորոգվել են հավատքի վայրերը: Դում Թրագութը նկատել է տվել, որ 1960-ականներից հայերի եւ ադրբեջանցիների միջեւ կոտորածներ են եղել: Այնուհետ բանախոսը մանրամասն նկարագրել է Արցախի անկախ հանրապետության ձեւավորման ընթացքը, դե ֆակտո գոյությունը, ապա 2023-ի ավարտին հանրապետության պաշտոնական «դադարեցումը, որի հետ լռեցվել են նաեւ հայոց եկեղեցու զանգերը»:

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# Հայության մշակութային խճանկարը իրանական 1403 թվականին ընդառաջ

Իրանահայ մշակութային կյանքում կարեւոր նշանակություն ունի համայնքային տարբեր միությունների եւ իրանական մի շարք հասարակական կազմակերպությունների միջեւ գործակցությունը: Հիրավի, այդ ամենի արդյունքում հնարավորություն է ստեղծվում տեղի հայությանը նախ ներկայացնել սեփական մշակույթը, ապա հանրահռչակել այն իրանական հասարակության մեջ, ինչպես նաեւ ստանալ նոր լիցքեր իրանական ավանդական արժեքներից:



Վերնշյալի մասին է վկայում Թեհրանի Իրանագիտության հիմնադրամի նախաձեռնությամբ եւ «Արտակ Մանուկյան» թանգարանի համագործակցությամբ՝ նշված կենտրոնում իրանահայ անվանի գեղանկարիչ **Գրիգոր Հակոբյանի** (Յաղուբի) կտավների ցուցահանդեսի անցկացումը: Ցուցադրվել են վարպետի վերջին 30 տարվա 68 կտավները՝ աբստրակտ եւ պատմառեալիստական պատկերներով: Կարեւորելով հայության դերը Իրանի ժամանակակից արվեստի զարգացման գործում՝ Իրանագիտության հիմնադրամի տնօրեն, դոկտոր **Մոհամմադ Հոսեյն Ռաջաբի Դավանին** եւ փոխտնօրեն, արվեստաբան, դոկտոր **Սեյեդ Ռազիե Յասինին** պատրաստակամություն են հայտնել հայության հետ առավել սերտ համագործակցություն սկսելու եւ ծավալելու հարցում՝ ընդգծելով, որ վարպետը գեղանկարչության ասպարեզում 60 տարվա պատմություն ունեցող իրանահայ ժամանակակից ամենաբեղմնավոր ու հաջողակ նկարիչներից է: Ռազիեն կարեւորել է հայերի ծառայությունները մշակույթի, արվեստի, թարգմանության եւ ճարտարապետության բնագավառում Սեֆյանների դարաշրջանից մինչեւ մեր օրերը եւ նշել այնպիսի արվեստագետների, ճարտարապետների եւ գրողների, ինչպիսիք են՝ **Կարապետ Տերտերյանը, Վարդան Հովհաննիսյանը, Փոլ Աբքարը, Հովհաննես Օհանյանը, Լորիս Ճգնավորյանը** եւ **Մարկո Գրիգորյանը**:



Հետաքրքրական է, որ անվանի արվեստաբան **Նեմաթոլլահ Քեյֆավուսին** էլ իր ելույթում վերահաստատել է. «Պարտք կմնամ, եթե չկրկնեմ, որ հայերն են եղել Իրանի ժամանակակից արվեստի զարգացման հիմքը: Այն ժամանակ, երբ Մարկո Գրիգորյանը 1965 թվականին անցկացրեց Թեհրանի առաջին բիենալեն, ժամանակակից իրանցի նկարիչների շուրջ մեկ երրորդը հայեր էին»:



Այսպիսով, հայ ժողովրդի իրանցի երախտագետ բարեկամները մեր օրերում էլ ոչ միայն հիշում, այլ նաեւ արժեւորում են այդ երկրի մշակութային կյանքում իրենց անսակարկ ներդրումն ունեցած երբեմնի ու ներկայիս անվանի հայ գործիչներին: Հարկ է նշել, որ անվանի արվեստագետին եւ իր գործի հմուտ գիտակին լավագույնս մեծարելու ու ճիշտ պահին գնահատելու կարողությունը, նույնիսկ «պարտք չմնալու նուրբ արվեստը», հիրավի, խիստ կարեւոր հանգամանք է, որին լավագույնս տիրապետում են իրանցի այս արվեստագետները: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Իրանագիտության հիմնադրամի կողմից 87-ամյա Յաղուբիին շնորհվել է տարիների ջանքերի համար շնորհակալական հուշատախտակ:

Թերեւս համայնքում մշակութային կյանքի անբաժան մասն են կազմում գրքերի շնորհանդեսները, որոնք սոցիալական մերձեցման առիթ են դառնում ընթերցասեր հանրության համար: Այդ մասին է վկայում օրերս Սուրբ Ամենափրկիչ վանքի «Սուրբ Ներսես Շնորհալի» գրադարանի նախաձեռնությամբ Նոր Ջուղայի հայոց Երաժշտական թանգարանում Սպահանի պետական համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս **Հայկ Սարյանի** հեղինակությամբ լույս տեսած «Հայ պատգամավորները Իրանի ազգային եւ Իսլամական խորհրդարաններում» եւ «Պահանջ» գրքերի շնորհանդեսի կազմակերպումը: Երկրորդ գրքի համահեղինակն է դոկտոր **Ալիաքբար Ջաֆարին**:

Հարկ է նշել, որ առաջին գիրքն առանձնահատուկ է, քանի որ մինչ օրս այդ մասին միայն անդրադարձ է եղել որոշ հոդվածներում: Փաստորեն այս աշխատությամբ փորձ է արվում նորովի արժեւորել իրանահայ համայնքի՝ ի դեմս նրա քաղաքական գործիչների շուրջ 100-ամյա ներկայությունը Իսլամական խորհրդարանում: Ինչ վերաբերում է երկրորդ գրքին, ապա այն ներառում է հայրենասիրական բանաստեղծություններ, պատմվածքներ, հոդվածներ: Գրքերը տպագրվել են «Նայիրի» հրատարակչության հովանավորությամբ:

Հավելենք, որ համայնքի մարզա-մշակութային կյանքում հիշարժան է Սպահանի հայոց թեմի առաջնորդ **Տ. Սիփան արք. Քեչեճյանի** հովանավորությամբ Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի 25-ամյակին նվիրված համերգի եւ օրերս ընթացող իրանահայ 33-րդ գարնանային մարզական խաղերի կազմակերպումը:

Այսպիսով, իրանական 1403 թ. մեկնարկին ընդառաջ հայ համայնքում ազդարարվում են մի շարք միջոցառումներ, որոնք, անկասկած, նպատակ ունեն նորովի մեծարել ու հանրահռչակել հայ արվեստագետներին: Ինչ վերաբերում է մարզա-մշակութային մյուս իրադարձություններին, ապա դրանք լավ առիթ են հայ մարզիկների համար չափելու իրենց ուժերը միմյանց հետ, իսկ հեռանկարում համալրելու այն անվանի իրանահայ մարզիկների շարքը, որոնք մեծ ներդրում են ունեցել ոչ միայն համայնքում, այլ նաեւ Իրանում սպորտի որոշ ճյուղերի զարգացման գործում:

# «Ես դատը շահել եմ, քանի որ ոչ թե վիրավորել, այլ որակում եմ տվել նրանց արարքներին». ՎԱՀԵ ԴԱՐԲԻՆՅԱՆ

1991 թվականից Հայաստանում հիմնադրված Ռամկավար Ազատական կուսակցության ֆրակցիան նորանկախ Հայաստանի խորհրդարանում 30 տոկոս էր կազմում եւ ծանրակշիռ ներկայություն ուներ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալ-հասարակական կյանքում:

Սփյուռքում գործող Ռամկավար Ազատական կուսակցության հետ գործակցելով՝ քաղաքական այս ուժն իր ռեսուրսներով նաեւ օգնում էր ոտքի կանգնել պատմական մեծ շրջափուլ անցնող մեր հայրենիքին:

Սակայն տասնամյակների ընթացքում ներկուսակցական տարաձայնությունները, հիմնադիր անդամներից ձերբազատվելու ոմանց անձնական նկրտումներն ու շահադիտական նպատակները, ինչպես եւ սպասելի էր, բարի հանգրվանի չեն հասցրել ՌԱԿ-ին:

Այդ պատճառով էլ 2023 թվականին ստեղծվեց Հայ Ազգային Ռամկավար կուսակցությունը, որի հիմնադիր համագումարը կայացավ ապրիլի 25-ին, Երեւանում:

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադիրներն ստիպված էին առանձնանալ իրենց իսկ ստեղծած քաղաքական կառույցից ու հիմնել նոր կուսակցություն, որի հիմնադիր համագումարի անցկացումը, որքան էլ զարմանալի է, կասկածի տակ է առել պառակտում ու ինտրիգներ հրահրող Հրաչյա Կարապետյանը՝ ՀՌԱԿ-ի ատենապետը:

Հիմնադիր համագումարը նկարահանվել է, այն լուսաբանել են լրատվամիջոցները, այնպես որ, անլուրջ է կասկածել, թե նորաստեղծ Հայ Ազգային Ռամկավար կուսակցությունն իր մասին չի հայտարարել եւ ընդունված կարգով չի ներկայացել հանրությանը: Տեսանյութերը համացանցում կան, դրանցից մեկն էլ այս հղումով է՝ https://www.youtube.com/watch?v=qOIRPt4lWt4&ab–channel=Azg




Սակայն անառողջ վերաբերմունքը թշնամանքի է հասել. ՀՌԱԿ-ի ներկայացուցիչներ Կարեն Կակոյանն ու Վարդան Նազիրյանը դատի են տվել Հայ Ազգային Ռամկավար կուսակցության ատենապետ **Վահե Դարբինյանին** սոցցանցերի նրանց գրառումների տակ վերջինիս թողած մեկնաբանությունների համար:

Ձգձգվող դատավարությունն, ի վերջո, ավարտվել է Վահե Դարբինյանի հաղթանակով:

Հայցվոր կողմի փաստաբանը ոչ մի անգամ չի ներկայացել դատարան՝ քաջ իմանալով, որ սա այն դեպքը չէ, որ թեկուզ 10 տոկոսով հնարավոր լինի դատը շահել:

ՀՀ քաղաքացին իր կարծիքն է հայտնել սոցցանցերով իր գրառման տակ, ազատորեն արտահայտել իր խոսքը, որն անձնական վիրավորանք չի պարունակել: Այստեղ դատապարտելի ոչինչ չկա:

Հայցվորի դատապաշտպանն ինչի՞ց կառչեր: Փաստաբանի իր հեղինակությունը պաշտպանելու համար նա նախընտրել է դատարան չներկայանալ, ինչի արդյունքում գործը կարճվել է՝ հօգուտ «մեղադրյալ» Վահե Դարբինյանի:

Մանրամասները՝ տեսանյութում՝ https://www.youtube.com/watch?v=p4b0wtV1EZg

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՅԹ
Թիվ 009(5791)
21-27 ՄԱՐՏ
2024

# Գիտակազմակերպական կյանքի արժեքավոր տարեգրություն, սկզբնաղբյուր-հաշվետվություն

**ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ**
**(Արմենյան)**

Գիտությունները զբաղվում են ոչ միայն իրենց հետազոտության առարկայի, այլեւ հենց իրենց՝ գիտությունների, դրանց՝ ինչ-որ ժամանակաշրջանում կամ ինչ-որ ուղղությամբ ծավալած գործունեության ուսումնասիրությամբ. գիտահետազոտական հաստատությունների գործունեության մաս է կազմում նաեւ գիտական միջոցառումների կազմակերպումը: Ժամանակ առ ժամանակ հրապարակ են գալիս աշխատություններ՝ նվիրված այս կամ այն գիտությանը, դրանով զբաղվածների գործունեությանը: Այդօրինակ աշխատություններից է վերջին տարիներին լույս տեսած «ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները» գիրքը (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021), որ հեղինակել է նույն հաստատության ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահ (2010-2023 թթ.), ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի անդամ (2010-ից) **Մերի Կիրակոսյանը** (Գրքի գիտական խմբագիր՝ ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Ասատրյան**, ում պատկանում է նաեւ գրքի ստեղծման գաղափարը):

Հեղինակը առանձին գլուխներով անդրադարձել է հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումներին, հայ արվեստի հարցերին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանսներին, Հայաստանի եւ Վրաստանի արվեստի հիմնահարցերին նվիրված միջհանրապետական գիտական կոնֆերանսներին, Մոսկվայում կազմակերպվող «Ճարտարապետություն, ժառանգություն, ավանդույթ եւ նորարարություն» խորագրով միջազգային գիտական կոնֆերանսներին, երաժշտագիտական միջոցառումներին, հայ արվեստի երեւելիների հոբելյաններին ու երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջաններին:




Հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ է նման նախաձեռնություն իրականանում գրել՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումների մասին: Մեզ հետաքրքրող աշխատության մեջ առաջին անգամ ի մի է բերված հիշյալ հաստատության կազմակերպած գիտական միջոցառումների պատմությունը՝ հիմնադրման օրվանից: Երիտասարդ արվեստաբանուհին այս գիրքը գրելու համար ուսումնասիրել է գիտական նստաշրջանների մասին յոթ ու կես տասնյակ գիտական լրատու եւ գիտական նստաշրջանների նյութերի եւ հիմնադրույթների շուրջ հինգ ու կես տասնյակ ժողովածու: Հեղինակը մեծ աշխատանք է կատարել. մանրամասն ներկայացրել է արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները՝ անդրադառնալով նաեւ դրանց ուղեկցող մշակութային միջոցառումներին: Ցույց է տվել այդ միջոցառումների դերը, նշանակությունն ու արժեքը հայագիտության կազմակերպման եւ զարգացման գործում: Գրքում կան նաեւ հեղինակային եզրահանգումներ եւ հետաքրքրական մի բացահայտում:

Այս աշխատանքը պատկերացում է տալիս օտարների՝ հայ արվեստի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Փաստորեն ինչ-որ չափով մեզ ծանոթացնում է արտերկրյա հայագիտությանը, քանի որ գիտական միջոցառումներին մասնակցելը գիտությամբ զբաղվելու ցուցիչներից է, եւ գիտելիքներ ստանալով արտերկրում ու Հայաստանում տեղի ունեցած՝ հայ արվեստին նվիրված գիտական միջոցառումներին օտար հայագետների մասնակցության վերաբերյալ՝ ընդհանուր առմամբ տեսնում ենք, թե տվյալ ժամանակահատվածում զարգացման ի՛նչ մակարդակի վրա է եղել արտասահմանյան հայագիտությունը, ի՛նչ վերաբերմունք ու հետաքրքրություն են ունեցել մեր արվեստի ու մշակույթի նկատմամբ այլազգի գիտնականները:

Բնականաբար գրքում գաղափար է տրվում նաեւ հայաստանյան արվեստաբանական կյանքի մասին: Հետաքրքրական տեղեկություններ կարելի է ստանալ նաեւ հայ եւ վրացի արվեստաբանների համագործակցության վերաբերյալ, իմանալ, թե ինչ չափով են հարեւան երկու ազգերը հետաքրքրված եղել միմյանց արվեստով, մշակույթով, գիտական հողի վրա ի՛նչ համագործակցություն են ծավալել նրանք իրենց մշակութային փոխճանաչելիությունը մեծացնելու, հարստացնելու ուղղությամբ: Հայ ու ռուսաստանցի արվեստաբանների համագործակցությանը ծանոթանալու առումով եւս ուշագրավ է գիրքը: Առանձնակի ուշադրության կենտրոնում են երաժշտագիտական միջոցառումները:

Հայ արվեստի երեւելիների հոբելյաններին նվիրված գլուխն ընթերցելիս տեսնում ենք, թե հայ արվեստաբանական հանրությունը ինչ վերաբերմունք է տածել իր մեծերի նկատմամբ, ինչպես է հիշել, գնահատել ու մեծարել իր վաստակաշատ եւ արժանավոր զավակներին:

Ճանաչողական արժեք ունի նաեւ գրքի այն հատվածը, որից իմանում ենք, թե ինչպիսին է եղել Արվեստի ինստիտուտի ղեկավարության ու աշխատակիցների, ՀՀ ԳԱԱ ղեկավարության, ՀՀ կրթագիտական գերատեսչության վերաբերմունքը հայրենի արվեստաբանության երիտասարդ մշակների՝ մասնավորաբար Արվեստի ինստիտուտի երիտասարդ մասնագետների նկատմամբ:

Մերի Կիրակոսյանը «Գիտական լրատու գիտական նստաշրջանների մասին» բաժնում ժամանակագրական եւ այբբենական կարգով զետեղել է գիտական նստաշրջանները լուսաբանող հրապարակումները, տպագրված՝ հայաստանյան մամուլում: «Մատենագիտություն գիտական նստաշրջանների նյութերի եւ հիմնադրույթների հրատարակված ժողովածուների» բաժնում դարձյալ ժամանակագրական եւ այբբենական կարգով ներկայացրել է գիտական նստաշրջանների նյութերի եւ հիմնադրույթների հրատարակված ժողովածուների մատենագիտությունը: Կան նաեւ «Առաջաբանի փոխարեն», «Վերջաբան» եւ «Հեղինակի մասին» բաժինները:

Գիտական հաստատության աշխատանքի արդյունավետությունը դրսեւորվում, չափվում է նաեւ նրա կազմակերպած գիտական միջոցառումներով, քանզի, որպես կանոն, այդ միջոցառումներին հիմնականում մասնակցում են կազմակերպիչ հաստատության աշխատակիցները՝ իրենց գիտահետազոտական աշխատանքի արդյունքներով: Հետեւաբար այս կամ այն գիտական հաստատության կազմակերպած գիտական միջոցառումների պատմությունը տվյալ հաստատության պատմության մի մասն է, ասել է թե՝ այս աշխատությունը ինչ-որ տեսանկյունից հայ արվեստն ուսումնասիրող գիտական օջախի պատմությունն է, ինչպես եւ՝ նրա կատարած աշխատանքի յուրօրինակ հաշվետվությունը փաստորեն:

Աշխատությունն ունի նաեւ սկզբնաղբյուրային արժեք, եւ հայ արվեստաբանության պատմությունն ուսումնասիրելիս այն կարող է ծառայել իբրեւ սկզբնաղբյուր, հարուստ նյութ տալ հայագիտության այդ ճյուղի պատմությունը հետազոտողին: Սույն գիրքը բնականաբար մատենագիտական արժեքով էլ է օժտված:

## Արցախի ժառանգության պաշտպան Յասմին Դում Թրագութը՝ մրցանակակիր

Հալածյալ քրիստոնյաների Շտեֆանուս հիմնադրամի 2024-ի հատուկ մրցանակակիրն է ավստրիացի հայագետ, պատմական եւ հնագիտական հետազոտություններով զբաղվող, Զալցբուրգի համալսարանի պրոֆեսոր **Յասմին Դում Թրագութը**: Նրան այս մրցանակը հանձնվելու է ապրիլի 20-ին, ժամը 19-ին, Բոննում, հանդիսավոր երեկոյի ժամանակ, որի ընթացքում ֆինանսավորում կտրամադրվի ԼՂ հայերին: Գովասանաճառը կներկայացնի քրեական և միջազգային իրավունքի մասնագետ, Գերմանահայ իրավաբանների միության նախագահ **Գուրգեն Պետրոսյանը** (Էրլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ Ալեքսանդր համալսարան):

Ինչպես հիմնադրամն է ներկայացնում, «Դում Թրագութը քաջարի հետազոտող է» , դրա մասին է վկայում ԼՂ-ի հայերի քրիստոնեական ժառանգությունը ուսումնասիրելու նրա անզուգական հանձնառությունը, ինչի համար արժանանում է մրցանակի: ԼՂ-ում հայկական մշակութային ժառանգությունը վտանգված է, իրազեկում է հիմնադրամի կայքը՝ լուսաբանելով՝ադրբեջանական ԶՈՒ հայ բնակչությանը՝ ավելի քան 100 000 մարդու վտարեց բնօրրանից՝ ամիսներ տեւած շրջափակման, 2023-ի սեպտեմբերի 19-ի հարձակման միջոցով:

Հիմնադրամի վարչության նախագահ **Միշայելլա Քոլլերը** շեշտադրել է նաեւ այն հանգամանքը, որ ուղնուծուծով գիտնական Դում Թրագութի տպավորիչ հատկանիշներից մեկն էլ հաստատակամությունն է, որով դիմակայում է Հայոց ցեղասպանությունն ուրացող եւ շարունակող Թուրքիայի ու Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության հանդեպ:



«**Ազգը**» ջերմորեն շնորհավորում է Յասմին Դում Թրագութին՝ մրցանակի առիթով: Արժանի համարելով նրա վաստակի նման գնահատումը, մաղթենք Դում Թրագութին առավել արդար մրցանակ՝ տեսնել Արցախի ազատագրումը, պատմական արդարության հաստատումը իր նվիրական հայ ժողովրդի համար:

«**Ազգի**» այս համարում անդրադարձել ենք Յասմին Դում Թրագութի մարտի 14-ին Վիեննայի համալսարանում Արցախի մասին բանախոսությանը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Պաբլո Աիարոնյան. Բալետային գործունեություն՝ ողջ աշխարհում

*__ԵՐԵՎԱՆ-ՍԱՆՏՅԱԳՈ, Չիլի__ - Արցանց զրուցակիցս՝ բալետի պարող, պարադիր եւ պարուսույց __Կառլոս Պաբլո Աիարոնյանը__, որը նաեւ Լատինական Ամերիկայի թերեւս միակ պարագետն է, ծնվել է 1956 թվականին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում: Պարային գործունեությունն սկսել է 12 տարեկանում, ծննդավայրի «Մարալիկ» հայկական պարախմբում (ղեկավար՝ __Ռոսիտա Չագըճյան__), 18 տարեկանից ուսանել դասական պար՝ աշակերտելով __Ռաուլ Սեւերոյին__: Եղել է Ուրուգվայի «Սոդրե» ազգային բալետի, Միլանի Լա Սկալա թատրոնի, Կառլա Ֆրաչչիի բալետի խմբի, Բոլոնիայի Քաղաքապետարանի թատրոնի եւ Չիլիի «Բալե Սանտյագոյի» մենակատար: Որպես հաջողակ պարող՝ նա իր հետքն է թողել աշխարհի բազմաթիվ բալետային խմբերում (Ֆլանդրիայի թագավորական բալետ, Չեխական ազգային բալետ, Արեւմտյան Ավստրալական բալետ, Շվեդիայի թագավորական բալետ, Կորեական ազգային բալետ, Բեռլինի Պետական բալետ, Լա Պլատայի Արգենտինական բալետ եւ «Կոլոն» թատրոն, Ռիո դե Ժանեյրոյի Քաղաքապետարանի թատրոն եւ այլն): Հանդես է եկել __Ավգուստ Բուռնոնվիլի, Մարիուս Պետիպայի, Ջոն Քրանկոյի, Նիկոլայ Բերյոզովի, Ջերոմ Ռոբինսի, Գլեն Թեթլիի, Ուվե Շոլցի__ եւ այլոց բեմադրություններում («Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», «Կարմեն», «Կոպելիուս կախարդը», «Հրեղեն հավքը», «Մոխրոտը», «Սիլֆիդ» եւ այլն): Որպես հրավիրյալ պարուսույց աշխատել է Լոնդոնի, Սան Ֆրանցիսկոյի, Ուրուգվայի, Նոր Զելանդիայի պարի դպրոցներում, Իվան Նագիի հետ եղել է Չիլիի «Բալես դե Սանտյագո» խմբի գեղարվեստական ղեկավարը: 43 տարեկանում Պաբլո Աիարոնյանը Լոնդոնում ավարտել է խորեոլոգիայի (պարագիտություն) ուսումը (Բենեշի շարժման գրառման համակարգ), որի օգտագործմամբ գրառել է մի շարք պարային ներկայացումներ, հատկապես բրազիլացի պրիմա-բալերինա եւ պարադիր __Մարսիա Հայդեի__ բեմադրությունները՝ ավելի քան երկու տասնամյակ հավատարմորեն սատարելով պարի գրառման այս ամենաճշգրիտ ձեւին: Ավելի ուշ, երբ Մարսիա Հայդեն ստանձնել է այդ խմբի տնօրենի պաշտոնը՝ Պաբլոն հանձն է առել նրա ներկայացումների վերաբեմադրությունները տարբեր երկրներում: Աիարոնյանը մինչ օրս շարունակում է դասական պարեր դասավանդել ու նաեւ Ջոն Քրանկոյի եւ Իվան Նագիի ժառանգության պաշտոնական վերաբեմադրիչն է:*

**-Հարգելի՛ Պաբլո, դուք աշխատել եք չորս մայրցամաքների տարբեր բալետային խմբերում (բացառությամբ Աֆրիկայի): Ի՞նչ տարբերություններ եք նկատել տարբեր երկրներում բալետային ստեղծագործական մոտեցումներում:**

-Այո, բազմաթիվ ընկերություններում եմ աշխատել, եւ ոչ միայն պարել եմ կամ բեմադրել, այլեւ աշխատել տեխնիկական անձնակազմի հետ, լուսավորության եւ այլնի: Պարերը քիչ թե շատ նույնն են ամբողջ աշխարհում, քանի որ բալետային կրթությունն ամեն տեղ գրեթե նույնն է: Վաղ մանկությունից բալետի դպրոցներում սովորեցնում են ամենակարեւորը՝ կարգապահություն ու նվիրվածություն, ուստի պարերը մեծ մասամբ շատ ինքնակարգապահական են: Որպես պարադիր՝



ես միշտ պատրաստված եմ գնացել փորձերին, հանկարծաբանություններ չեմ արել եւ շատ հստակ եմ աշխատում դաշնակահարի, նվագախմբի դիրիժորի եւ պարողների հետ: Իսկ տարբերություններ տեսել եմ հիմնականում պարախմբերի կազմակերպչական գործերում՝ քանի՛ ժամ են տեւում փորձերը, պարապմունքները, ընդմիջումը, շաբաթական քանի՛ օր են աշխատում եւ այլն, իհարկե նաեւ՝ ինչպես է տնօրենը ղեկավարում խումբը: Բայց, ինչպես ասացի, ամեն ինչ քիչ թե շատ նույնն է:

**-Դուք պարել եք բալետի բազմաթիվ հայտնի դեմքերի հետ՝ Ռուդոլֆ Նուրեեւ, Էրիկ Բրյուն, Սվետլանա Բերյոզովա, Ռոնալդ Հայնդ, Բեն Սթիվենսոն, Նատալյա Մակարովա, Մարսիա Հայդե, Ռիչարդ Քրեգան, Թամարա Գրիգորեւա, Օլգա Լեպեշինսկայա... Ի՞նչ եք սովորել նրանցից եւ կա՞ն արդյոք նրանց հետ կապված հետաքրքրական պատմություններ:**

-Այո՛, ինձ բախտ է վիճակվել աշխատել այդ բոլոր մարդկանց հետ: Ես ոչ միայն սոսկ պարում էի նրանց հետ, այլեւ սովորում էի, նրանք իմ ուսուցիչներն էին:

Էրիկ Բրյունը ջենթլմեն էր, շատ բարի մարդ, հիանալի դասական պարող եւ զարմանալի ուսուցիչ: Նրա հետ աշխատել եմ Լա Սկալայում. նա եկել էր որպես դասարանի ուսուցիչ՝ օրական երկու պարապմունքով, ինչը հրաշալի էր: Նրա դանիական դպրոցը շատ կարեւոր էր, մե՜ծ առավելություն էր...

Սվետլանա Բերյոզովան ֆա՛ն-տա՛ս-տի՛կ էր: Պարուհիների մեջ ամենագեղեցիկն էր, շատ արիստոկրատ, զարմանահրաշ ու բարի: Ինձ թվում էր, որ աշխատում եմ կայսրուհու, թագուհու հետ: Նա եկել էր Լա Սկալա՝ ուսուցանելու իր հոր՝ Նիկոլայ Բերյոզովի «Կարապի լիճը»: Նա գեղեցիկ էր, երբ ցույց էր տալիս, երբ բացատրում էր, ամե՛ն ինչում էր գեղեցիկ: Մենք դարձանք շատ լավ եւ մտերիմ ընկերներ, եւ երբ ես ապրում էի Լոնդոնում, պարբերաբար այցելում էի նրան: Շատ բան սովորեցի նրանից, նրա ուսուցանած դերերը բավական յուրահատուկ էին: Բերյոզովայի Օդետտա-Օդիլիան ինձ համար լավագույնն է 20-րդ դարում: Ես շատ լուսանկարներ ունեմ նրա հետ եւ հիանալի հիշողություններ...

Ռոնալդ Հայնդը հոյակապ թատերական գործիչ էր, կարող էիր շատ բան սովորել այդ մեծ պարադիրից եւ հարուստ փորձ ունեցող ֆանտաստիկ մարդուց: Նա դասավանդում էր մեծապես շռայլորեն: Ես պարել եմ նրա բեմադրած մի շարք բալետներում ու մինչ օրս նույնպես հիանալի հարաբերություններ եմ պահում նրա հետ, փա՜ռք Աստծո...

Նատալյա Մակարովան մեծ աստղ էր, որը եկել էր մեզ հետ պարելու, ինչը եւս մեծ փորձառություն էր: Նա նաեւ մեզ սովորեցրեց «Բայադերայի» իր տարբերակը: Շատ խիստ էր, շատ պարզ, նրա մեջ ամեն բան կրում էր Վագանովայի դպրոցի ազդեցությունը, բայց ժամանակի ընթացքում ավելի ջերմացավ, դարձավ ավելի շփվող մարդկանց հետ...

Մարսիա Հայդեն ինձ համար ընտանիքի անդամի պես է: Մենք միմյանց ճանաչում ենք 1986 թվականից, երբ



*Մարսիա Հայդեի հետ*

նա եկավ Չիլի՝ պարելու Ռիչարդ Քրեգանի հետ «Կամակոր կնոջ սանձահարումը» բեմադրության մեջ, եւ ես էլ պարեցի նրանց հետ: Դրանից հետո նա սկսեց ղեկավարել մեր պարախումբը: Նրա հետ ճանապարհորդել եմ աշխարհով մեկ՝ որպես իր պաշտոնական բեմադրողը եւ պարուսույցը: Մենք շատ հարազատ ու մտերիմ հարաբերությունների մեջ ենք...

Նույնը Ռիչարդ Քրեգանի պարագայում էր՝ մի հրաշալի, բարի անձնավորության եւ արտակարգ պարողի, որի հետ պարել եմ նաեւ «Ուրախ այրին» բալետում: Հետագայում նա Սանտյագոյում մի քանի բալետային բեմադրություն իրականացրեց: Միշտ հաճելի էր այս գեղեցիկ մարդուն եւ մեծ արհեստավարժին լսելը...

Թամարա Գրիգորեւան լեգենդ էր, որ աշխատել էր գնդապետ դը Բազիլի «Բալե ռյուս դե Մոնտե Կառլո» հռչակավոր խմբում: Այդ արտակարգ տիկինը չափազանց գեղեցիկ էր՝ օժտված բալետի զարմանալի իմացությամբ: Ամենը, ինչի մասին նա խոսում էր՝ հրաշալի մարդկանց, երկացանկի, բալետի պատմություն էր, եւ նա այդ պատմության մի մասն էր: Նա եկել էր դասավանդելու «Բալե ռյուսի» հին խաղացանկը: Գրիգորեւան այնքան էլ լավ չէր զգում իրեն, եւ քանի որ հայրս բժիշկ էր, տարա նրա մոտ՝ քննության, ու նա հորս հետ նույնպես լավ ընկեր դարձավ...

Իսկ Օլգա Լեպեշինսկայան երեք ամսով եկավ Լա Սկալա: Նա շատ լավ ուսուցչուհի էր, ուժեղ ու պահանջկոտ: Մշտապես հին պատմություններ էր պատմում Մեծ թատրոնից եւ խոսում էր այնպիսի մեծ աստղերի մասին, ինչպիսիք էին Ժդանովը, Ուլանովան, Պլիսեցկայան, Ֆեդիչեւը, Մաքսիմովան, Վասիլեւը...

Ողջ կյանքս գիտակցել եմ, որ դեմ առ դեմ գտնվում եմ նման զարմանահրաշ անհատականությունների առջեւ: Ու շատ բախտավոր եմ եղել՝ հանդիպելով նման մարդկանց եւ շատ բաներ սովորելով նրանցից...

**-Ես մշտապես հիացած եմ Ռուդոլֆ Նուրեեւով. տարիներ առաջ կարդացել եմ Դայան Սոլուեյի հեղինակած՝ նրա ամբողջական ծավալուն կենսագրությունը: Կա՞ն Նուրեեւի հետ կապված հատուկ պահեր, որոնք կցանկանայիք պատմել:**

-Նուրեեւին հանդիպել եմ 1980 թվականին, Լա Սկալայում, որտեղ գնացել էի կատարելագործվելու: Մի անգամ նա եկավ՝ դիտելու մեր պարապմունքը: Եվ խնդրեց պարախմբի տնօրենին ինձ ընդգրկել «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետում: Ես պարեցի Մերկուցիոյի ընկերոջ դերը: Բեմադրության որոշ տեսարաններում պարում էի Նուրեեւի հետ: Ինչպես գիտեք, նա զարմանալի անձնավորություն էր, շատ ուժեղ բնավորությամբ, արդեն 40 տարեկան էր, կամ՝ 43, եւ շատ ջանասեր էր, անվերջ հղկում էր ոչ միայն մեզ, այլեւ իրեն: Եվ, փա՜ռք Աստծո, նա հավանեց ու շատ հարգեց ինձ, քանի որ հասկացավ, որ ես նույնպես շատ ջանասեր եմ: Դա շատ սիրալիր քայլ էր: Մի օր ես Չեկետտիի անվան մեծ փորձասենյակում էի, ֆուետե եւ սոտե էի պարապում: Հանկարծ ներս մտավ Նուրեեւը, ու ես տեղում անշարժացա. այդ օրերին մարդ քարանում էր նման անձնավորությունների առաջ: Բոլորը գիտեին, որ նա շատ բռնկուն բնավորություն ուներ ու հայտնի չէ, թե ինչպես կարձագանքեր: Բայց Նուրեեւը հանեց վերարկուն ու մի փոքր շտկեց իմ շարժումները: Այնպես որ ես շատ լավ հիշողություններ ունեմ նրա հետ կապված: Նուրեեւը ջանասիրության հիանալի օրինակ էր, որին պետք էր հետեւել: Նրա գիտելիքները հսկայական էին բալետի պատմության, հագուստների բնագավառում, կարելի էր շատ բան սովորել՝ միայն նրան դիտելով ու լսելով:

**-Ենթադրում եմ, որ ձեզ համար կարեւոր էր 1986 թվականին արժանանալ «Նյու Յորք թայմսի» բալետի խիստ քննադատ Աննա Քիսելգոֆի դրվատանքին:**

-Այո՛, հրաշալի էր: 1986 թվականի հունվարն էր: Խոսքը Յոհան Շտրաուսի երաժշտությամբ Ռոնալդ Հայնդի բեմադրած «Ռոզալինդա» բալետի իմ դերի մասին էր: Երրորդ գործողության մեջ ես ունեի տեխնիկապես հագեցած մի համար՝ բազմաթիվ պտույտներով ու ցատկերով: Դա զվարճալի կատակերգական դեր էր, եւ, իհարկե, ուրախ էի Քիսելգոֆի արձագանքի համար: Այստեղ մեկ ուրիշ լավ բանն էլ այն էր, որ «Նյու Յորք թայմսի» էջերում մի հայի անուն շեշտադրվեց:

**-Պա՛բլո, ձեզ Շթութգարթի բալետը հրավիրել էր որպես հյուր պարող՝ հանդես գալու Օֆենբախի դերով Մորիս Բեժարի «Փարիզյան զվարճություններ» բեմադրության մեջ: Գիտե՞ք, որ այդ բալետի կերպարներից մեկում Բեժարը կերտել է իր սիրելի ուսուցչուհի Ռուզան Սարգսյանին:**

-Այդ օրերին չգիտեի, քանի որ դերը կոչվում էր պարզապես «մադամ Ռուզան», բայց հետո իմացա նրա ծագման մասին: Ես բալետի մասին գրքերի հարուստ գրադարան ունեմ, որոնցից մեկում կարդացի, որ նա հայուհի էր: Երբ մեկ անգամ հանդիպեցի Բեժարին, նա արդեն շատ ծեր ու հիվանդ էր, շատ չէր խոսում, ուստի նրան չհարցրի իր ուսուցչուհու մասին: Բայց ինձ համար պատիվ էր հանդես գալ Շթութգարթի բալետի բազմաթիվ հիանալի պարողների հետ:

⇨ Գ

# Հետադարձ հայացք Սիրուն Երեցյան եզակի արվեստագետի աշխատանքներին



«Բեղմնավոր ժամանակներ: Հետադարձ հայացք Սիրուն Երեցյան արվեստագետին» (Timeful: Seeroon Yeretzian Retrospective) խորագրով ցուցահանդես է բացվել Գլենդեյլի Հայկական արվեստի կենտրոնում հարգանքի տուրք մատուցելու եզակի, Աստվածատուր տաղանդի տեր արվեստագետ **Սիրուն Երեցյանին**: Կազմակերպիչն է նրա որդին՝ **Առնոն**, որ ի մի է բերել նոր տարբեր փուլերի ու ոճերի աշխատանքները, սկսած նրա կարիերայի ամենավաղ շրջանից մինչեւ 2011 թվականը: «Նույնիսկ Սիրունի ստեղծագործություններին հետեւած մի անձնավորության համար ցուցահանդես մուտք գործելը նման էր պայթեցնող գույների ու կերպարանքների մի տաճար կամ սրբավայր մտնելուն», գրում է **Արփի Սարաֆյանը** «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում: Մի առինքնող փորձառություն էր տեսնել նրա պայծառ գույներով «արեւային» եւ մուգ երանգներով «լուսնային» աշխատանքները, որոնք բացահայտում են տարիների ընթացքում նրանում կուտակված պայքարը, նրա ներքին հույզերն ու մտասանջությունները եւ նաեւ հիվանդություններ հաղթահարելու աննկուն կամքը:

Սիրունը Լոս Անջելեսի արվեստի աշխարհ է մուտք գործել 1985-ին, ավարտելով «Otis/Parsons Art Institute and School of Design-ի» բակալավրի բաժինը: Այնուհետեւ մասնակցել է բազմաթիվ խմբային ցուցահանդեսների: Կազմակերպել անհատական ցուցահանդեսներ: Նրա «արեւային» ստեղծագործություններում նկատվում են հայկական նախնադարյան ժայռափորագրությունների ազդեցությունները: 1995-ին նա Գլենդեյլում բացել է միջնադարյան խորհրդանշող մանրանկարչի անունը կրող իր «Ռոսլին արվեստի պատկերասրահը», որտեղ նրան հաճախ կարելի էր տեսնել ստեղծագործելիս: Նրա «Այբուբենի փառահեղ հմայքը» մնայուն գլուխգործոց է համարվում: «Դրանք դարձան իմ անհաղթահարելի սովորույթը, երջանկությունը, նաեւ դեղամիջոցն ու մտորումները», գրել է նա: Իսկ մուգ երանգների «լուսնային» գործերում նա խորամուխ է լինում դժբախտ մարդկանց պատմություններին եւ Բեյրութի «Տիրո» որբանոցում անցկացրած իր տարիներին: Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերին նա տեղափոխվել է Մ. Նահանգներ եւ ընդգրկվել Լոս Անջելեսի





«heArt Project» ծրագրում, որը նպատակ ուներ աջակցելու հուսաբեկ երիտասարդներին, որպեսզի նրանք կարողանային մուտք գործել արվեստի կախարդական աշխարհը:

Տարիների ընթացքում արվեստագետը հեռացել է սկզբնական շրջանի կտրուկ եւ ազդեցիկ արտահայտչամիջոցներից (Ցեղասպանությունը խորհրդանշող գլխատված մարմիններ, եւ այլն) եւ ավելի նուրբ միջոցներով է ներկայացրել իր մտասանջությունները, որոնք խորը հոգեբանական ներաշխարհ են բացում դիտողի առաջ եւ ստիպում նրան խորհրդածել:



Երբ 2012-ին բժիշկները անողոք հիվանդություն (ALS or Lou Gehrig s Disease) են ախտորոշում նրա մոտ, նա ստիպված է լինում թողնել վրձինն ու գրիչը. «Հիվանդությունը կենսունակ գլուխս միայն թողեց իմ անկենսունակ մարմնիս վրա», գրել էր իր մասին: Բայց ստեղծագործելու աննկուն կամքը շարունակում էր պայքարել: Նա սկսել էր օգտվել «DynaVoxEye-Max» կոչվող հրաշք համակարգչի ծառայությունից, որի վրա զետեղված լուսանկարչական ապարատը որսում է աչքի շարժումները եւ էկրանի վրա գրանցում ստեղնաշարի համապատասխան տառը, այնուհետեւ բառը, եւ նախադասությունը:

Անսահման համբերություն պահանջող այս գործընթացի հետեւանքով Սիրունի բանաստեղծությունների 2 հատոր է դրվել գրասերների սեղանին: Մեկը «Բառակերտում եւ սեւ աթոռի խոստովանություններ» (2012-ին), իսկ մյուսը՝ «Էվոլյուցիան իմ հեղափոխությունն է» (2018-ին) վերնագրերով: «Իմ նպատակը գրքեր հրատարակելը չէր: Ես գրում էի, որովհետեւ հաղորդակցվելու այլ միջոց չունեի», գրել է նա այս հատորի «Սիրելի ընթերցողներին» ուղղված առաջաբանում:

Իր բանաստեղծություններում այնքան անբռնազբոս ուրախություն կա, որ անհեթեթ է դառնում նրան խղճալու ամեն մի արտահայտություն: Նրա գործերը խիզախորեն հայտարարում են «ես կամ», «մի խղճացեք ինձ»: Նրա արվեստը շատ ավելի մեծ նշանակություն ունի մեր անհասկանալիորեն խճճված ժամանակներում, երբ բռնությունն ու խորտակումն է կարծես տիրապետող դարձել: Նրա բանաստեղծությունները հաստատում են, որ մարդկայինն ու բարեգործությունը դեռեւս գոյություն ունեն եւ ժամանակը «առլեցուն» (timeful), այսինքն՝ «իմաստավորված» անցկացնելն է կարեւորը՝ տալով, բաժնեկցելով եւ նեցուկ հանդիսանալով ուրիշներին:

Բացի արդեն հրատարակված երկու ալբոմներից (2011-ին եւ 2014-ին), մի նոր ալբոմ շուտով լույս կտեսնի:

*Թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ*
*(The Armenian Mirror-Spectator)*

# Պաբլո Ահարոնյան.
# Բալետային գործունեություն՝ ողջ աշխարհում

**-Դուք ծնվել եք Աստղիկ Այնթապլյանի եւ Գուրգեն Վահագն Ահարոնյանի ընտանիքում, որը եղել է բարձրագույն կրթություն ստացած առաջին հայն Ուրուգվայում: Ինչպե՞ս են նրանք հայտնվել այդ երկրում: Եվ ի՞նչ մակարդակով են ձեզ փոխանցել հայ մշակույթը:**

-Հայրական պապս՝ Հովհաննես Ահարոնյանը, իր հայրենի Զեյթունից հեռանալուց հետո մեկնել է Երուսաղեմ, որտեղ մանկատան պատասխանատու է եղել: Նրա ընտանիքի մի մասը սպանվել է, մի մասն՝ անհայտ կորել, ուստի որոշել են տեղափոխվել Ամերիկա: Անհավատալի էր, որ 1950-ականների կեսերին նրանք գտել են հորս զարմիկներից մեկին: Պապս իր կնոջ՝ Կատարինե Բոստանյանի հետ եկել է Ուրուգվայ, որը տնտեսապես շատ լավ էր, ներգաղթյալներին շատ լավ էին ընդունում, կլիման հիանալի է, ուստի նրանք հնարավորություն ունեցան խաղաղ ապրելու այդ շատ կուլտուրական երկրում: Պապս ողջ մնացած հինգ որդի ուներ՝ Արշակը, Նուբարը, Սետոուին, Արիսը եւ հայրս՝ Գուրգենը: Ավագը՝ Արշակը, ապրել է ԱՄՆ-ում, ապա հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան, որտեղ էլ մահացել է: Մեր ողջ ընտանիքը շատ հայեցի էր: Ամեն կիրակի ես եկեղեցի էի գնում որպես դպիր եւ սարկավագ, իսկ քույրս երգում էր երգչախմբում: Մենք միշտ հայերեն էինք խոսում, թեեւ ես հայկական դպրոց չեմ հաճախել: Գերմանական դպրոցում ենք սովորել, բայց շատ հայեցի ենք դաստիարակվել, ռադիոյով միշտ լսել ենք հայկական երաժշտություն՝ Արամ Խաչատրյան, Առնո Բաբաջանյան, օպերաներ: Հայրս կատարյալ հայերեն էր կարդում ու գրում, ավագ հորեղբայրս՝ նույնպես:

Մայրական կողմի տատիկս ու պապիկս՝ Խաչեր Այնթապլյանը եւ Բեատրիս Մանուկյանը, նույնպես հրաշալի մարդիկ էին: Նրանք Հարավային Ամերիկա են եկել 1924 թվականին: Տատիկս ինձ սովորեցրել է հայերեն գրել-կարդալ, բայց ես Ուրուգվայից հեռացել եմ 23 տարեկանում, ուստի հայոց լեզուն օգտագործելու հնարավորություն երբեք չեմ ունեցել: Հիմա Չիլիում ցանկություն ունեմ վերադարձնելու իմացությունս եւ գտնելու մեկին, որը կարող է ինձ նորից հայերեն սովորեցնել:

**-Ենթադրում եմ, որ դուք ազգակցական կապ ունեք ուրուգվայցի կոմպոզիտոր Կորյուն Ահարոնյանի (1940-2017) հետ:**

-Այո՛, նա իմ Նուբար հորեղբոր տղան էր: Իսկ իմ զարմուհի Անթառամ Գեղուհի Ահարոնյանը դաշնակահարուհի էր եւ Արամ Խաչատրյանի մոտ բարեկամը: Երբ Խաչատրյանը եկել է Մոնտեվիդեո՝ նվագախմբի հետ ղեկավարելու իր դաշնամուրային կոնցերտը, ընտանիքս հյուրընկալել է նրան: Արամ Խաչատրյանի նամակների ժողովածուում կա Անթառամին ուղղված 12 նամակ:

**-Այո՛, տարիներ առաջ Երեւանի Գրականության եւ արվեստի թանգարանում հանդիպել եմ տիկին Անթառամին: Իսկ շփվո՞ւմ եք Չիլիի հայերի հետ եւ ունե՞ք Հայաստան այցելելու ծրագրեր:**

-Չիլիում շատ հայերի հետ չեմ շփվում, բայց շատ կցանկանայի կապ ստեղծել: Ես այցելել եմ Սանտյագոյի Հայ Տունը, որը շատ գեղեցիկ վայր է եւ շատ մոտ՝ իմ ապրելավայրին: Բայց, ցավոք սրտի, Չիլիում հայերը շատ չեն, եւ նրանցից շատ քչերն են խոսում հայերեն: Երբ տանն եմ՝ հայերեն եմ մտածում, իսկ երբ որոշ հայ արվեստագետներ գալիս են Չիլի, բաց չեմ թողնում նրանց հանդիպելու եւ հայերեն խոսելու առիթը: Եվ, իհարկե, կցանկանայի գնալ Հայաստան եւ բալետի ուսանողներին փոխանցել այն, ինչը սովորել եմ ամբողջ աշխարհում...

ՊՈԼ ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Civilnet

# Բաքվի հայերի ոդիսականը օսկարակիր «Վերջին արհեստանոցը» ֆիլմում

Հոլիվուդում մարտի 10-ին անցկացված «Օսկար» մրցանակաբաշխության ժամանակ «Լավագույն վավերագրական կարճամետրաժ ֆիլմ» անվանակարգում Ամերիկյան ակադեմիայի պատվավոր արձանիկին արժանացավ ամերիկականադական «Վերջին արհեստանոցը» (The Last Repair Shop) ֆիլմը (ռեժիսորներ՝ **Բեն Փրաուդֆուտ** եւ **Քրիս Բաուերս**), որ պատմում է ադրբեջանական հայատյաց ջարդերից մազապուրծ մի հայորդու մասին, որն ԱՄՆ-ում ապաստան գտնելով փորձում է իր երեք համախոհ տեխնիկների հետ ամեն ինչ անել, որ ոչ մի դպրոցական չզրկվի երաժշտության հաճույքը զգալու հնարավորությունից: Նրանք վերանորոգված երաժշտական գործիքներ են անվճար տրամադրում Լոս Անջելեսի դպրոցական երեխաներին, որոնցից ոմանք ներգրավված են ֆիլմում: Այդ երեխաները հիմնականում օտարերկրյա ներգաղթողների կամ տնտեսական ծանր պայմաններում ապրող ծնողների զավակներն են, որոնք այլապես այդ գործիքներին երբեք էլ չէին կարող տիրանալ:








Դաշնամուրներ վերանորոգող Սթիվ Բաղմանյանի ղեկավարած արհեստանոցը վերջինն է այդ շրջանում, որ նման բարեգործությամբ է զբաղվում: Բաղմանյանի սերը երաժշտության հանդեպ սկիզբ է առել Բաքվում, երբ տեսել է, թե ինչպես է աշխատում իր դպրոցի դաշնամուր լարողը: «Դժբախտաբար, հարյուր հազարավոր հայ երեխաների եւ նրանց ծնողների եւ մեծահասակների կյանքը շեշտակի փոխվեց, երբ փլուզվեց Խորհրդային Միությունը», հիշում է Բաղմանյանը: «Մեր ծնողների մտքով անգամ չէր անցնում, որ նման դաժանություններ կարող են տեղի ունենալ: Մենք ապրում էինք համերաշխ մեր հարեւանների հետ: Ցուրտ գիշերներին բակերում կրակի շուրջ հավաքված տաքանում էինք»: Ամեն ինչ, սակայն, փոխվում է, երբ Սթիվի հորը սպանում են իր աշխատավայրում եւ ընտանիքի ողջ մնացած անդամները միանում են երկրից ստիպողաբար դուրս մեկնողների շարասյանը, թողնելով իրենց ետին ամբողջ ունեցվածքը:

«Դժվար էր օդանավակայան հասնելը, որովհետեւ դիմագծերդ մատնում էին, որ հայ ես եւ ամեն րոպե մարդիկ կարող էին վնաս հասցնել քեզ», շարունակում է Սթիվը, որ Մ. Նահանգներ է հասնում առանց անգլերեն որեւէ բառ իմանալու: Ոգեւորիչ է եղել այն, որ նրան հովանավորողները եղել են դաշնամուր լարողներ: Այդ հանգամանքը հիշեցրել է նրան իր մանկության երազանքները եւ նա սկսել է հետեւել դասընթացների, որպեսզի մասնագիտանա այդ ասպարեզում: Նրա բախտին արժանացած երեք այլ տեխնիկներ միանում են նրան՝ ստեղծելու մի առողջ մթնոլորտ, որտեղ երաժշտությունը դառնում է բուժիչ միջոց՝ վերակերտելու մարդկանց ճակատագիրը: Դա է արհեստանոցի առաքելությունը: Բաղմանյանի խոստովանությամբ իր նամակատուփը հեղեղված է ֆիլմի սիրահարների երկտողերով, որոնք ցանկանում են նվիրաբերել իրենց հին երաժշտական գործիքները, որպեսզի արհեստանոցը շարունակի իր բարի առաքելությունը:

Պատրաստեց ՀԱԿՈԲ ԾՈՒԻԼԻԿՅԱՆԸ

# «Հայաստանն իսպանական աշխարհում»




Իսպանացի, լատինամերիկացի եւ հայ գիտնականների համագործակցությամբ վերջերս Սալոբրենյայի (Գրանադա) «Ալուլիա» հրատարակչությունը լույս է ընծայել աննախադեպ մի հատոր՝ նվիրված հայ-իսպանական պատմամշակութային կապերին: «Հայաստանն իսպանական աշխարհում» հոդվածների ժողովածուն հրատարակվել է Իսպանիայի կառավարության եւ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ: Խմբագիրն է Գրանադայի համալսարանի արվեստի պատմության պրոֆեսոր, արվեստի պատմության ամբիոնի ակադեմիական քարտուղար **Միգել Անխել Սոռոչե Կուեռվան**:

Ժողովածուն կազմված է նախաբանից, ներածությունից եւ 13 հոդված-ուսումնասիրությունից: Դրանք են՝ «Իսպաներենի ուսուցումը Հայաստանում. Ծագումներ, ընթացիկ իրադարձություններ եւ հեռանկարներ» (**Հասմիկ Բաղդասարյան**, Երեւանի պետական համալսարան), «Հայերը Նոր Իսպանիայում, 16-րդ, 17-րդ եւ 18-րդ դարերում» (**Արտուրո Պոնսե Գուադիան**, Միչոականի Սան Նիկոլաս դե Իդալգոյի համալսարան, Մեքսիկա), «Նշումներ հայի պաշտամունքի եւ կերպարի մասին. սուրբ Բլազը վաղ ժամանակակից Իսպանիայում» (**Լուիս Գորդո Պելաես**, Կալիֆորնիայի պետական համալսարան, Ֆրեզնո, ԱՄՆ), «Հայ վաճառականները Իսպանական միապետության սահմաններում. Ֆիլիպինների կաթոլիկ եկեղեցու հետ հաշտեցման երկակի դեմքը, 18-րդ դար» (**Ալբերտո Բաենա Սապատերո**, Սալամանկայի համալսարան, Իսպանիա, **Խաբիեր Լամիկիս**, Բասկերի Երկրի համալսարան), «Հայաստանը իսպանական ֆոնդերում եւ հավաքածուներում» (**Միգել Անխել Սոռոչե Կուեռվա** եւ **Անա Ռուիս Գուտիերես**, Գրանադայի համալսարան), «Ալֆոնսո XIII-ի մարդասիրական միջամտությունը Հայոց ցեղասպանության ընթացքում» (**Վարդան Մատթեոսյան**, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդարանի գործադիր տնօրեն), «1915 թվականին հայերի դեմ իրականացված ցեղասպանության հանցագործության ապացույցներն ու վկայությունները իսպանական դիվանագիտական եւ հյուպատոսական նամակագրության մեջ» (**Իվան Գաստանյագա**, անկախ հետազոտող, ԱՄՆ), «Հայերն Իսպանիայի քաղաքացիական պատերազմում (1936-1939)» (**Արծվի Բախչինյան**, ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան), «Պայքար հայոց ցեղասպանության ճանաչման համար Իսպանիայում» (**Ֆեռնանդո Կամաչո Պադիյա**, Մադրիդի ինքնավար համալսարան) եւ «Տիխուանայի հայ համայնքի ծագումը 1924 թվականին: Քվոտայի օրենքը եւ «սպիտակ» լինելու իրավունքը» (**Կառլոս Անթառամյան**, Միչոականի քոլեջ, Մեքսիկա), «Հայ ներգաղթ եւ պարբերական մամուլ. հանդիպումների կետեր եւ ներքին լարվածություն՝ ցեղասպանությունից մինչեւ խորհրդայնացում» (**Մարսելո Կարապետյան**, Լատինական Ամերիկայի եւ Կարիբյան ուսումնասիրությունների ինստիտուտ, Բուենոս Այրեսի համալսարան, Արգենտինա), «Արգենտինայի հայ համայնքը» (**Խուան Պաբլո Արթինյան**, Բուենոս Այրեսի համալսարան, Արգենտինա) եւ «Մշակութային, կրթական եւ հետազոտական հարաբերություններ Իսպանիայի եւ Հայաստանի միջեւ զարգացման համագործակցության համար» (**Ֆրանսիսկո Ա. Սուրիան Էռնանդես**, Մադրիդի Կոմպլուտենսե համալսարան):

Ա. Բ.

# Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում





ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը գործարկել է «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» եռալեզու (հայերեն, անգլերեն եւ ռուսերեն) ակադեմիական հարթակը: Այն աշխարհին է ներկայացնում Արցախի մշակութային ժառանգությունը, հետեւում դրա արդի վիճակին, արձագանքում ադրբեջանական վանդալիզմի դեպքերին: Տվյալների հավաքմամբ եւ մշակմամբ զբաղվում է ինստիտուտում ստեղծված «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» խումբը եւ «Monument Watch» թիմը:

Հարթակի հիմնական նպատակն Ադրբեջանին անցած Արցախի անշարժ մշակութային ժառանգության, թանգարանների, մշակութային օջախների քարտեզագրումն ու գույքագրումն է՝ վիճակը մինչեւ պատերազմը, ընթացիկ վիճակին հետեւելը եւ փոփոխությունների վավերացումը (ավերում, ձեւափոխում, վերօգտագործում, քանդակների, պատկերների, արձանագրությունների ջնջում ու փոփոխում, նոր սիմվոլների կիրառում եւ այլն), այն միջազգային գիտական ու մշակութապահպան հանրությանը ներկայացնելը: «Հարթակը հատուկ ձեւաչափով մշակված գիտական հոդվածների տեսքով ներկայացնում է Արցախի մշակութային ժառանգությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը. հնավայրերը, հուշարձանները, կոթողները, քաղաքացիական կառույցները, թանգարանները, հավաքածուները եւ այլն: Ահազանգերի բաժնի հոդվածները ներկայացնում են Ադրբեջանի բռնայուրացման քաղաքականությունը եւ նման դեպքերը, գնահատում դրանք միջազգային մշակութապահպան կոնվենցիաների լույսի ներքո:

«Մշակութային ժառանգության հետազոտության, ահազանգման եւ պահպանության ասպարեզում թիմի հետազոտական աշխատանքը հիմնվում է միջազգային կոնվենցիաների, տեսական ու մեթոդաբանական մոտեցումների վրա: Դրանք հայաստանյան իրականության մեջ նորարարական են, հավասարակշռված եւ անկողմնակալ: Թիմը համապատասխան տեսական, գործնական ու տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ՀՀ անվտանգության խորհրդին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը, ՀՀ Առաքելական եկեղեցուն: Միջազգային եւ հայաստանյան մշակութապահպան կառույցները, լրատվամիջոցները հաճախ են օգտագործում «Monument Watch»ի նյութերը որպես չեզոք գիտական արդյունք եւ իրավիճակների անկողմնակալ փաստագրում: Արդյունքները ներկայացվել են Եվրախորհուրդ, Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն:

Հարթակի ստեղծմանն աջակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Ֆորդի հիմնադրամը, Գյուլբենկյան հիմնարկությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, ինչպես նաեւ անհատ հովանավորներ:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր

# Մահվան քայլերգ չորս ձեռքով

*Երբ փակեցի երկու աչքերս,*
*որ չտեսնեմ ակնհայտը,*
*ճակատիս բացված երրորդ աչքով*
*սկսեցի տեսնել այն,*
*ինչ մինչեւ այդ աննկատ էր*



Կարծես թե բոլորս էլ համաձայն ենք: Ոչ մեկս էլ բողոք չունի, հաշտ ենք ու հաշտ: Անտեր մնացած երրորդ աչքը դավաճանի նման իրավիճակը պարզ տեսնում է, իսկ իրավիճակը հետեւյալն է. իշխանությունը համաձայն է մեր թշնամիների հետ, ընդդիմությունը համաձայն է մեր իշխանության հետ, իսկ ժողովուրդը ե՛ւ իշխանության, ե՛ւ ընդդիմության հետ է համաձայն: Հույս ունենք, որ վերջում, էն ամենավերջում, մեզ մի գերեզմանի տեղ, այնուամենայնիվ, կթողնեն. էնպես որ մտահոգվելու կարիք՝ չիք:

Նիկոլ Փաշինյանը բացեիբաց հայտարարեց, որ տալու ու հանձնելու է՝ ինչ էլ պահանջեն: Որ պատերազմ չլինի: Ճիշտ է, որ տա, միեւնույն է՝ երաշխիք չկա, որ պատերազմ չի լինի, բայց փոխարենը, որ չտանք, պատերազմ հաստատ կլինի: Գնացել ու մարդկանց ասել է՝ պատրաստվեք տներիցդ դուրս գալու: Մարդիկ էլ ո՛չ այս, ո՛չ այն՝ հարցրել են, բա որ տանք, բա միջպետական ճանապարհը ո՞նց կլինի, բա «երթեւեկը կխաթարվի», բա որ սա հանձնենք, հո էլ բան չե՞ն ուզի: Հասկանում եք, չէ՞: Այսինքն սա համաձայն ենք հանձնել, բայց ուզում ենք, որ «սիրելի վարչապետը» մեզ երաշխիքներ տա: Իսկ նա երաշխիքներ չունի տալու: Էդպես էլ ասել է՝ «երաշխիքներ չկան, բայց հույս կա»... Էդպես հույսով էլ ապրեք:

Ու որ ուզում եք իմանալ, վատ էլ չեն ապրում: Ամեն ինչի հետ հաշտ են ու համերաշխ: Ներքին «քաղաքական ոլորտում»՝ մե հրաշք: Ծառերը կտրում, սակուրաները տնկում են, մե՛կ: Անօրինական շինությունները քանդում են, երկո՛ւ: Օրը մի նոր հարկ ու տուրք մոգոնում են, երե՛ք: Տրանսպորտի գինը թանկացնում են, չո՛րս: Կրթությունը վերից վար քանդում են, շենքերը եսիմ ում նվիրում են, տեղը ակադեմիական քաղաք յանի պիտի կառուցեն, էդ էլ ձեզ հարյուր տասնմեկ: Էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը: Հարյուր փաստ, մի բան էլ ավելի: Հեչ տեսե՞լ եք՝ մեկը բողոքի: Մի երկուսը ֆեյսբուքում մի քիչ բորբոքվում են, բայց դե դա հաշիվ չի, բանի տեղ դնող չկա, մեկ է, ինչը ոնց ուզում՝ անում են մարդիկ: Հետո ԱԺ ամբիոնից ընդդիմության վրա մատ են թափ տալիս, հաքաթա են անում, հրապարակավ ձեռք են առնում բոլորիս, թե «էդքան որ ասում եք՝ հանձնո՛ւմ ենք, հանձնո՛ւմ ենք, ի՞նչ եք հանձնել մինչեւ էսօր»: Ընդդիմությունն էլ՝ սուս, կուլ է տալիս ու պարգեւավճար ստանում, կուլ է տալիս ու գնում արտասահմանյան ճամփորդությունների, կուլ է տալիս ու սուս ու փուս նստում:

Չէ, իրականում այնքան էլ սուս ու փուս չի:

Մեր ընդդիմությունը (ձեռքերս ուղղակի քոր են գալիս ամեն անգամ ընդդիմություն բառը գրելիս երկու կողմից վերցնել չակերտների մեջ), ժամանակ առ ժամանակ ԱԺ ամբիոնից ելույթներ է ունենում, չորրորդ դասարանի աշակերտի գրած շարադրության մակարդակի տեքստեր է կարդում, իշխանությանը փիս-փիս բաներ է ասում ու... այդքանը: Որեւէ երկրում, որտեղ իշխանություն իր ժողովրդի գլխին սրանց արածի տասը տոկոսն աներ, ընդդիմությունը կվերցներ իշխանությունը, ա՛խ էլ չէր քաշի: Բայց մերոնք չեն շտապում: Երկրում, որտեղ հասարակության մեծ մասը դժգոհ է իշխանություններից, ունենալ այսպիսի հաշտ ու անոթխած ընդդիմություն, մեղմ ասած՝ օրհնանք է: Իշխանությա՛ն համար: Ժողովրդին փողոց հանում են միայն խիստ բարենպաստ եղանակին, որոշակի ժամերի, որ աշխատանքն արդեն ավարտած լինեն, ուղարկում են տուն էլի նորմալ ժամի, որ ժողովրդի քունը հանկարծ չխաթարվի: Լավն որոշակի ժամերի պետք է «զարթի», բայց մնացած ժամերին որ քնի, նյարդերը հանգիստ կլինեն: Մնացած ժամանակը մեր ընդդիմությունը ամուր նստած է ԱԺ՝ ընդդիմության համար նախատեսված աթոռներին, ժամանակ առ ժամանակ, ամեն հերթական էսկալացիայից հետո, ամբիոնից «խրոխտ» ելույթ է ունենում ու իշխանությանը «մեծարգո պարոն» ասում: Այդպես շատ ավելի անվտանգ է: Հատկապես, որ իշխանափոխության համար փող չեն տալիս, դեռ մի բան էլ՝ ընդիակառակը, գործեր են հարուցում, իսկ «խրոխտ խոսելու» համար կարգին վճարում են:

Որքան էլ չցանկանանք խոստովանել, բայց այսօր Հայաստանում փաստացի իշխանությունն ու ընդդիմությունը լծվել են միեւնույն գործին: Իշխանությունը ժողովրդին վախեցնում է հզոր ու անհաղթ թշնամու կերպարով, ընդդիմությունն էլ՝ հզոր ու անհաղթ իշխանության շորշոփով: Իշխանությունը Ադրբեջանի հետ նաեւ Թուրքիայի անունն է տալիս, որ ավելի շատ վախենանք, պնդում է, որ ժողովուրդը պետք է փոխի կարմիր շորերը ցլերից խուսափելու համար, չնայած գիտականորեն ապացուցված է, որ ցլերը գույները չեն տարբերում. իրենց համար միեւնույն է, ինչ կարմիրը, նույնն էլ՝ կանաչը, նրանք կատաղում են զուտ դիմացինի անկանոն ու չհիմնավորված շարժումներից: Այսինքն փաստացի հենց «շորերը փոխելու» (կարդա՝ անխնա հանձնելու) պրոցեսը կարող է դառնալ ցլերի գրգռման պատճառ: Ու ինչքան «տանք ու նվիրենք ու ոչ մի բան մեզ չմնա», այնքան ցլերը ավելի են գրգռվելու ու ավելի շատ են ուզելու:

Բայց դե իշխանության հարցը պարզ է: Իրենք ամեն ինչ անելու են ու ցանկացած զիջումների գնալու են իրենց իշխանությունը մի քանի տարով կամ գուցե ամսով երկարաձգելու համար, թեկուզ եւ իրենց իշխանության հետ Հայաստանն էլ վերջանա. դա միակ գործն է, որում այն այս ողջ ընթացքում հաջողել է ու շարունակում է հաջողել: Բա ընդդիմության հետ ո՞նց վարվենք: Սրանք էլ փորձում են ժողովրդին վախեցնել անհաղթ ու ամենակարող իշխանության կերպարով, որի հախից իբր հնարավոր չէ գալ, որին պետք է «գլուխներս կախ» յոլա տանենք, քանի որ նրանք ոչնչի առաջ կանգ չեն առնի:

Իրականում կարծես բոլորս զբաղված ենք իմիտացիայով: Իշխանությունը ձեւ է անում, թե իշխանություն է, մինչդեռ փաստացի երկիրը լրիվ այլ լծի տակ է, ընդդիմությունը իմիտացնում է, թե ընդդիմություն է, մենք էլ ժամանակ առ ժամանակ իմիտացնում ենք, թե ժողովուրդ ենք ու զայրանալ գիտենք: Իսկ իրականում՝ մի՞թե իրոք այդքան վախենալու են մեր իշխանությունները, իրո՞ք անհաղթելի են նրանք, իրո՞ք պետք է սարսափենք նրանցից: Մի հատ շուրջներդ նայեք: Էս դեմքերի՞ց մենք պիտի սարսափենք: Այս կիսագրագետ ու ինքնահավա՞ն... Իրո՞ք:

Իսկ եթե՝ ո՛չ, ապա ծագում է հաջորդ հարցը, այդ դեպքում ինչո՞ւ մեր ընդդիմությանը «ձեռնտու չէ» լուրջ գործողությունների անցնել: Որովհետեւ այն չի՞ կարող սեփական ամբիցիաներից վեր կանգնել, համախմբվել ու ելք գտնել: Չի՞ կարող, թե՞ չի ուզում: Եթե չի կարող, ուրեմն մեր ինչի՞ն է պետք այսպիսի ընդդիմությունը, որ սեփական շահերն ու ապահովությունը երկրի ու ժողովրդի շահից ավելի բարձր է գնահատում: Իսկ եթե կարող է, բայց չի ուզո՞ւմ, ապա երիցս՝ մեր ինչի՞ն է պետք նման ընդդիմությունը:

Իհարկե, մենք կարող ենք հույս փայփայել, որ վճռական պահերին մեր ժողովուրդը միշտ համախմբվում ու վերջին կռիվը տալիս է թշնամու դեմ՝ ներքին, թե արտաքին, ու երբ թշնամին կհասնի Երեւանի մատույցներին (արդեն ուղիղ, ոչ թե փոխաբերական իմաստով), մենք գուցե թե կհամախմբվենք ու հակահարված կտանք: Կամ կտանք, կամ չէ, իհարկե, եթե մինչեւ այդ համախմբումը Հայաստանում բավարար քանակությամբ չարտագաղթած մարդ մնացած լինի ու նաեւ պատճառ՝ համախմբվելու:

Բայց սա, ինչպես ավանդաբար ասվում է այս շարքի նյութերի վերջում, բոլորովին այլ ու շատ ավելի տխուր պատմություն է:

**Ռ. Ա.**

# Իմաստաբանական բառարան

## *Հայի զգայարանները*

Մեզ շրջապատող միջավայրի մասին պատկերացում կազմելու, հետեւաբար նաեւ՝ սեփական անվտանգությունն ապահովելու համար բնությունից մեզ տրված հինգ զգայարաններից ամենաթույլն ու խոցելին մեր հոտառությունն է, ավելի ճիշտ՝ «քաղաքական հոտառությունը»՝ «թթածակը», կամ ռուսերենով ասած՝ «նյուխը» (нюх):

Մարդու հոտառության օրգանը քիթն է: Բայց հայի մոտ քթի չափն ու հոտառության աստիճանը հակադարձ մեծություններ են. որքան քիթը մեծ, այդքան հոտառությունը՝ թույլ: Այդ պատճառով էլ միջավայրի մասին պատկերացում կազմելու համար հայը, ըստ կարելույն, ավելի շատ է քիթը խոթում ուր պատահի:

Միջավայրից ստացվող տեղեկատվության մեծ մասը մարդն ստանում է տեսողության միջոցով: Տեսողության վերլուծիչի շնորհիվ մարդը կարողանում է կողմնորոշվել շրջապատի առարկաների նկատմամբ եւ խուսափել վտանգից:

Այստեղ էլ հայի բախտը չի բերել, քանի որ հայի տեսողության վերլուծիչը՝ աչքը, նույնպես թերի է աշխատում եւ, ինչպես ընդունված է ասել՝ տառապում է «քաղաքական կարճատեսությամբ»: Այդ պատճառով էլ հայի «աչքից» վրիպում են մեր շուրջը ծավալվող աշխարհացունց կարեւոր իրադարձությունները:

Նույնիսկ տեսողական արատի պատճառով, հաճախ մեր որոշ քաղաքական այրերի տեսլականների տարբերությունը փչացնում է ապագայի մասին մեր պատկերացումները:

Տեսողական արատը բնորոշ չէ միայն իշխանավորներին: Ընդդիմությունն էլ կույր լինելու պատճառով չի կարողանում նկատել վերջին տարիների ձեռքբերումները, թե՛ կոռուպցիայի դեմ պսեւդո պայքարի, թե՛ տնտեսական շողշողուն աճի եւ թե ժողովրդավարական բաստիոնների կատարելագործման բնագավառներում:

Սակայն հայի դժբախտության պատճառը միայն տեսողական օրգանի՝ աչքի տկարությունը չէ: Երբեմն մտքի կուրությունն էլ է մեզ փորձանքի բերում: Եթե այդպես չլիներ, Եղիշեն հինգերորդ դարում չէր ասի՝ «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»:

Մեր զգայարաններից շոշափելիքն էլ առանձնապես չունի հարկ եղած զգայնությունը: Հայի մաշկը՝ հենաշարժական օրգաններում տեղադրված հատուկ ընդունիչները, որոնց միջոցով մարդն ընկալում է շրջապատող միջավայրի մեխանիկական, ջերմային, ցավային գործոնների կոմպլեքս ազդեցությունը, մի տեսակ բթացել է, եւ չի կարողանում տարբերակել տաքը սառից, լավը վատից, վտանգավորը նվազ վտանգավորից...

Ականջի աղեղնակը ամուր պահելուց բացի, ականջներն ունեն նաեւ խոսքն ընկալելու, հաղորդակցվելու, տեղեկատվություն ստանալու, խորհրդականների մասնագիտական խորհուրդներին ականջալուր լինելու հատկություն: Բայց մենք թույլ ենք նաեւ այդ կարեւոր հատկությունից: Թերեւս այդ պատճառով են հայերը հորինել «ասողին լսող է պետք» իմաստությունը: Միգուցե հենց այդ պատճառով է ռուսների կողմից հրապարակ նետվել «ով չի լսում **Լավրովին**, կլսի **Շոյգուին**» թեւավոր դառնալու հայտ ներկայացրած ասացվածքը, որը թարգմանաբար նշանակում է «ով որ ականջով չի լսում, թիկունքից լսել կտան (ծեծելով լսել կտան)»:

Մեզ մնում էր միայն լեզվի ու բերանի խոռոչի մյուս մասերից բաղկացած մկանային բջիջների օգնությամբ չորս համային հատկություններից զգալ գոնե երեքը՝ քաղցրը, թթուն եւ աղին: Բայց վերջին շրջանում մեր բերանի խոռոչի բջիջները չգիտես ինչու կենտրոնացել են միայն դառնահամ խոսքերի վրա եւ կարծես ուրիշ համ չեն էլ զգում:

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հայ ժողովրդի պատմական հիշողության եւ բանավոր մշակույթի պահապանը՝ Վերժինե Սվազլյան



ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանագետ, բանահավաք, ժողովրդագետ, ցեղասպանագետ, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ Վերժինե Սվազլյանի կյանքի ավելի քան 65 տարիները միահյուսված են հայ ժողովրդի ճակատագրի վկայություններին: Հայաստանի եւ Սփյուռքի գիտական հանդեսներում ու պարբերական մամուլում լույս տեսած նրա շուրջ 500 հրատարակություններում, ընդ որում՝ տարբեր լեզուներով, ինչպես նաեւ շուրջ 30 աշխատություններում ամբարված են հայ ժողովրդի պատմական հիշողությունն ու բանավոր մշակույթի կորստից փրկված նշխարները:*

*Մարտի 1-ին ականավոր բանագետ-ցեղասպանագետի ծննդյան 90-ամյա հոբելյանը մեծ հանդիսությամբ նշվեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում, իսկ մարտի 2-ին՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, գիտական հաստատություններ՝ որոնցում երկար տարիներ աշխատել է վաստակաշատ գիտնականը:*

## «Հայ բանագիտության մեծ տիկինը»

Մարտի 1-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ընդլայնված գիտական խորհրդում ջերմ մթնոլորտ էր: Ներկաները՝ պատմաբաններ, հնագետներ, բանասերներ, այլ բնագավառների ներկայացուցիչներ ծաղկեփնջերով եւ ծափողջյուններով դիմավորեցին հոբելյարին:

Սեղանին դասդասված էին Վերժինե Սվազլյանի գրքերը, ստվարածավալ հատորները. Հայ ժողովրդական հեքիաթների **«Արցախ-Ուտիք»** (1973), **«Տարոն-Տուրուբերան»** (1984), **«Վան-Վասպուրական»** (1998), **«Մուսա Լեռ»** (1984), **«Կիլիկիա. Արեւմտահայոց բանավոր ավանդությունը»** (1994), **«Մեծ Եղեռն. Արեւմտահայոց բանավոր վկայություններ»** (1995), **«Մեծ եղեռնը արեւմտահայոց հուշապատումներում եւ թուրքալեզու երգերում»** (1997՝ հայ., ռուս., 1999՝ անգլ., 2005՝ թուրք., Ստամբուլ), **«Պոլսահայոց բանահիւսութիւնը»** (2000), **«Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ»** (2000, համալրված 2011՝ հայ., անգլ., 2013՝ թուրք., Ստամբուլ), **«Հայոց ցեղասպանությունը եւ պատմական հիշողությունը»** (2003-2005՝ հայ., անգլ., ֆր., գերմ., ռուս., թուրք.՝ Ստամբուլ): Ցուցադրված էին նաեւ պատկերազարդ քառահատոր մեծադիր հանրագիտարանը ( The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife. , որի էջերում տպագրված է նաեւ Վ. Սվազլյանի **Armenia** ծավալուն հոդվածը, **«Մուսա Լեռան հերոսամարտը. Ականատես վերապրողների վկայություններ»** (2015, հայերեն, անգլերեն), **«Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Դոնի Ռոստով եւ Պյատիգորսկ)»** (2020, հայերեն, ռուսերեն, անգլերեն) եւ ի վերջո՝ **«Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում»** (2021, հայերեն, անգլերեն) ստվար հատորը:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն **Արսեն Բոբոխյանը** ջերմագին ողջույններով շնորհավորեց հոբելյարին ու քաջառողջություն եւ գիտական նորանոր ձեռքբերումներ մաղթեց նրան:

Նույն ինստիտուտի փոխտնօրեն, Բանահյուսության տեսության եւ պատմության բաժնի վարիչ **Տորք Դալալյանը** համառոտ ներկայացրեց Վ. Սվազլյանի կենսագրականն ու գործունեությունը:

Նա ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: 1947 թ. Սվազլյանների ընտանիքը հայրենադարձվել է Հայաստան: 1956 թ. գերազանցությամբ ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժինը: 1958-1961 թթ. հայտնի ակադեմիկոս **Կարապետ Մելիք-Օհանջանյանի** գիտական ղեկավարմամբ ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան կրթաթոշակառու: 1961 թվականից մինչեւ օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում: 1996-2004 թթ. միաժամանակ աշխատել է նաեւ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: 1996-2018 թթ. եղել է նույն ինստիտուտներում, ինչպես նաեւ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող Մասնագիտական խորհուրդների անդամ:

Սկսած 1955 թվականից՝ ավելի քան 65 տարիների ընթացքում, անձնական նախաձեռնությամբ եւ արեւմտահայի արյան կանչով, ձեռքով գրառել, ուսումնասիրել եւ հրատարակել է Արեւմտյան Հայաստանի, Կիլիկիայի եւ Փոքր Ասիայի ավելի քան 150 հայաբնակ տեղավայրերից բռնագաղթվածների տարբեր բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության նշխարները, նրանց փաստավավերական հուշ-վկայություններն ու պատմական երգերը՝ հայերեն եւ թուրքալեզու:

Բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենական եւ արտերկրի ավելի քան երեք տասնյակ պարգեւների, այդ թվում պետական՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդնելու համար ՀՀ Նախագահի Առաջին մրցանակի եւ «Ոսկե հուշամեդալի» (2006) եւ «Մովսես Խորենացի» մեդալի (2013): 2016 թ. գիտության եւ կրթության բնագավառում ունեցած վաստակի համար նրան շնորհվել է ՀՀ Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի նախկին տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Պավել Ավետիսյանը**, լինելով Հայոց ցեղասպանությունը վերապրածների ժառանգ, առանձնահատուկ շեշտադրումով գնահատեց հոբելյարի աշխատությունները ու դրանց պատմավավերագրական արժեքը՝ նշելով. *«Տիկին Վերժինեի աշխատանքների կարեւորությունն այն է, որ ինչքան շատ ժամանակ անցնի, այնքան դրանք դառնալու են արժեքավոր ու փնտրված...: Մեր ժողովրդի հավաքական հիշողության մեջ սրանք շատ կարեւոր տեղ են զբաղեցնում: Եվ միայն դրա համար այս տիկնոջ ձեռքը պետք է հազար անգամ համբուրել»:*



ՀՑԹԻ-ում

Հայոց ազգագրության թանգարանի փոխտնօրեն **Սվետլանա Պողոսյանը** գիտական անձնակազմի անունից ընթերցեց *«Հայ բանագիտության Մեծ Տիկին»* Վերժինե Սվազլյանին ուղղված ուղերձը:

Այնուհետեւ, ելույթ ունեցավ նույն ինստիտուտի Հայ բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ. **Թամար Հայրապետյանը**՝ գնահատելով հոբելյարի բանահավաքչական գործունեության եւ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա): Նա Սփյուռքում հետեւողականորեն հայտնաբերել է ականատես-վերապրողներին ու նրանց ժառանգներին՝ չշրջանցելով նույնիսկ ծերանոցները:

Ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ, պ. գ. դ. **Ռուբեն Կարապետյանն** իր ելույթում ընդգծեց Վ. Սվազլյանի գիտական ուսումնասիրություններում առկա նաեւ էթնոսոցիոլոգիական ուղղվածությունը:

Իսկ Բանահյուսության տեսության եւ պատմության բաժնի գլխավոր գիտաշխատող, պ. գ. դ. **Հակոբ Չոլաքյանն** իր ելույթում նշեց. *«Տիկին Վերժինե Սվազլյանն առավելապես ծանոթ է իբրեւ բանահավաք: Իր բանահավաքչական գործի կարեւոր մեկ բաժինը Ցեղասպանության վերապրողների վկայությունների արձանագրությունն է: Ասիկա հիրավի մեծ ներդրում եղավ ցեղասպանագիտության համար»:*

Ինչպես վկայում էին ինստիտուտի գիտաշխատողները, մեկ միջոցառումը բավական չէ գնահատելու ժողովրդագիտական այն ժառանգությունը, որը սերունդներին է ավանդել Վ. Սվազլյանը:

## Պատմական հիշողության պահապանը

Մարտի 2-ին Վերժինե Սվազլյանին մեծարեցին նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

ՀՑԹԻ նախկին տնօրեն, պ. գ. դ. **Հարություն Մարությանը,** ինչպես նախորդ օրն իր հնչեցրած ելույթում, նույնպես եւ այս միջոցառմանն ընդգծեց, որ Վ. Սվազլյանն այն գիտնականն է, որ հուշապատումի ժանրը բարձրացրել է գիտական աստիճանի. *«Տիկին Սվազլյանը առաջինն էր Խորհրդային Հայաստանում, որ այդ հուշագրությունները դրեց ժողովածուի մեջ եւ համահավաք ձեւով ներկայացրեց հանրությանը: ...Տիկին Վերժինեն վավերագրել է վերապրածների պատմածները: Եվ որքան ժամանակն անցնի, որքան ժամանակի փոշին նստի, դրանց արժեքն ավելի է մեծանալու, որովհետեւ վերապրողներ այլեւս հնարավոր չէ գտնել: Նա անհայտությունից փրկել է ցեղասպանության իրողության մասին պատմող վկայությունները»:*

Այնուհետեւ, ելույթ ունեցավ ՀՑԹԻ Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրության բաժնի վարիչ, պ. գ. թ. **Շուշան Խաչատրյանը** եւ ներկայացրեց հոբելյարի ՀՑԹԻ-ում աշխատած տարիների գործունեության մասին հետաքրքրական փաստեր՝ արձանագրելով, որ նա եղել է ՀՑԹԻ հիմնադիր գիտնականներից մեկը:

Նույն բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. **Թեհմինե Մարտոյանը**, միանալով շնորհավորանքներին, նշեց, որ Վ. Սվազլյանը կարողացել է իրականություն դարձնել իր հոր՝ եգիպտահայ գրող, հրապարակախոս, երգիծանկարիչ, ազգային-հասարակական գործիչ, Զմյուռնիայի աղետից վերապրած **Գառնիկ Սվազլյանի** պատգամն իր դստերը. «...Պատիվ բերես քու ծնողքիդ եւ քու ազգիդ, Հայրենիքիդ»:

ՀՀ ԳԱԱ Հայկական հանրագիտարան-հրատարակչության գլխավոր խմբագիր-տնօրեն **Հովհաննես Այվազյանի** գնահատանքի ուղերձը հոբելյարին ընթերցեց նույն հաստատության աշխատակից **Էլմիրա Մարգարյանը**:

ՀՑԹԻ տնօրեն **Էդիտա Գզոյանը** «Հայոց ցեղասպանության ուսումնասիրության, բանավոր պատմությունների հավաքման գործում ունեցած նշանակալի ավանդի համար» Վ. Սվազլյանին շնորհեց թանգարան-ինստիտուտ հիմնադրամի *«Հայոց ցեղասպանության հուշահամալիր»* հուշամեդալ:

Միջոցառման ավարտին հուզիչ ու տպավորիչ էր Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի վաստակավոր արտիստ **Արմենուհի Սեյրանյանի** ներկայացրած Մուսա Լեռան *«Գյարմեր ֆըստան»* եւ Բութանիայի *«Արտ մը ունիմ՝ գարի է»* ժողովրդական հնավանդ երգերը:

Վերջում ցուցադրվեց *«Սվազլյան գերդաստանի հավատամքը»* վավերագրական ֆիլմը, որը դիտվեց մեծ հետաքրքրությամբ:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Հայավայել ապրելու սպասումով




Խոստովանենք թե ոչ` համոզված ենք, որ դժվարին ժամանակներ ենք ապրում: Օրվա ընթացքում ժամ չի լինի, որ հեռուստաալիքներով տարածվող հաղորդումներում քաղաքագետներ ու վերլուծաբաններ ներկայացնող շատ հաճախ պատանյակների տեսքով անձինք չխոսեն մեզ պատուհասած արհավիրքի մասին: Իրոք ծանր է, սակայն առայժմ ոչ այնքան, որ հարկ է վիճակը սարսափի միջավայր տեղափոխել, որտեղ երեք միլիոն հայաստանցիներ կողք-կողքի են կանգնած, ոմանց բնորոշմամբ` երեք միլիոն նապոլեոններ: ՀՀ շարքային քաղաքացին, որոնցից մեկն էլ սույն տողերի հեղինակն է, իր ոչ փոքր շրջապատի կարծիքը ներկայացնելով չի էլ քննարկում ներկայացված մոտեցումը:

Համոզմունքն առաջանում է մեզ հասու փաստերի ու գործընթացների ծանոթանալու արդյունքում, որոնք երբեմն ուղղակի ցնցող են: Ասենք` 1950-70-ականներին չափահաս տարիքում եղածներից ո՞վ էր լսել **Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանի**, նույն ինքն` **Կիրիլ Իվանովիչ Շոլկինի** մասին, որը Չելյաբինսկ գերգաղտնի բնակավայրի միջուկային կենտրոնի առաջին գիտական ղեկավարն էր, միջուկային կենտրոնի գլխավոր կոնստրուկտորը, միջուկային հրթիռների գլխիկները տեղադրողը: Նրա արածից շատ բան չպատկերացնելով` ընդամենը նշենք, որ սույն այր մեր հայրենակիցը միակ հայ ԽՍՀՄ եռակի սոցիալիստական աշխատանքի հերոս էր, որը մահկանացուն կնքել է 1968 թվականին, երկնային կյանքի հազիվ 57-րդ տարում: Ի՞նչ կարող էր անել, այդպիսին էր ատոմի հետ աշխատող հազվագյուտ գիտնականների ճակատագիրը, որոնց թվում էր մեր ազգի ներկայացուցիչը:

Դժվար է համակերպվել այն մտքի հետ, որ մարդ արարածի մեր տեսակը անվերապահ համակերպվել է անզորի ու անօգնականի կարգավիճակի հետ, թեւաթափ է եղել: Հանրությունը ցավով է հիշում ընդամենը տարիներ առաջ իր մահկանացուն կնքած հասարակական ու գիտական գործիչ **Կարեն Վարդանյանի** մասին, որի գործը հայոցս պետությունն ու պետականությունը ամրապնդելուն ուղղված ձեռնարկումների իրականացումն էր: Ճանապարհը նախանշել էր, որն այսօր պարտավոր են հաղթահարելով անցնել նրա հետեւորդները: Վստահել է պետք նրանց, քանզի եթե ինչ-որ բան անել հաջողվում է այլոց, դրա գերական ի զորու է մեր տեսակին: Թերեւս մեզ արհավիրքով սպառնացողներն արդեն տեղյակ են ինչ-ինչ արդյունքներից եւ զսպում են իրենց խոսքից գործի անցնելու ցանկությունը: Հայոցս հավերժության շահառուն ոչ միայն հավատում, այլեւս զգում է մեր կարգավիճակը:

Այն հաստատուն ունենալու համար մեզ կայուն թիկունք է պետք, որտեղ իշխանության արած չարած կիսաս-պռաս գործերի կողքին պետք է տեղ ունենա կայուն կայացումն ու զարգացումը, հավելյալ արժեքի ստեղծումը: Շատերի պես հավատալով նորօրյաների խոսքին, 2018-ից սկսյալ հանդիպեցի ՀՀ տնտեսական կայացման պատասխանատու պետական կառույց էկոնոմիկայի նախարարության վարչությունների պետերի հետ: Հարցս ընդամենը հետեւյալն էր. համաշխարհային գյուղոլորտի վիճակագրությունում թիվ 1 մշակաբույս է դարձել եգիպտացորենի հատիկը, որի արտադրությունը կազմում է 1.2 մլրդ տոննա, երբ ցորենի բերքը հազիվ 770 մլն տոննա է: Եգիպտացորենի այդ հսկայական բերքի հատիկը որպես անասնակեր օգտագործելու արդյունքում ֆերմերներն ամենուր կենդանիների մթերատվության հարցում ապահովում են բարձր ցուցանիշներ թե՛ կաթնատվության, թե՛ մսաճի առումներով: Ինչո՞ւ այս պարզ գործընթացը Հայաստանում չի կիրառվում: Կարիք առաջացավ լինել նաեւ փոխնախարարի մոտ. ավաղ...: Նախորդ տարվա նոյեմբերին կայացավ հանդիպում նախարարի հետ, որի արդյունքը հաստատ *ավաղ է:* Եվ սովորական հարցը` մինչեւ ե՞րբ ենք հավի միս ներկրելու, որի ծավալներն առանձին տարիներ մոտեցել են մինչեւ 40 հազար տոննայի, ինչում է ինքնաբերաբար: Չէ՞ որ խոսքը մի քանի տասնյակ միլիարդավոր դրամների մասին է, որոնք արտաքին առեւտուր կազմակերպողները դոլարների են փոխանակում ու ներկրումներ կազմակերպում: Այս տարիներին թուրքերը եգիպտացորենի հատիկի արտադրությունը 2 մլն տոննայից 7 մլն տոննայի հասցրեցին, հավի մսի ծավալը` 660 հազար տոննայից 2.3 մլն տոննայի, 1 բնակչի հաշվով 30 կգ-ի, երբ ՀՀ ցուցանիշը հազիվ 5 կգ է: Մեր առեւտրային կետերի ցուցադրություններում ներկայացվող հիշյալ ու այլ մթերքները հիմնականում ներկրված են, որը գրեթե չի հետաքրքրում մեր պաշտոնյաներին, որոնք նաեւ այս վիճակի անմիջական պատասխանատուներն են:

Իրոք տարօրինակ միջավայրում ենք ապրում: Նախարարներն ու ՀՀ վարչապետը կառավարության հեռարձակվող նիստերում սովորականից ավելի հաճախ են խոսում այնպիսի մանրուքներից, որպիսիք են դպրոցական հաստատությունների սանհանգույցների ապակեպատ դռներն ու գյուղական համայնքների պուրակների նստարանների որակը եւ գրեթե չեն հիշում փոքր ու միջին գործարարությունը ծավալելու, սպառվող սննդի որակական հատկանիշների, տրանսպորտային ահազնացող խցանումների ու պատահարներից աճող զոհերի, հայաստանաբնակներիս առօրյայի այլեւայլ աղավաղումների մասին:

Այսպես էլ ապրում ենք:

# Իմանանք թշնամու ռազմական ներուժը

➩1 Աշխարհաքաղաքական հարցերով վերլուծաբան **Արայիկ Սարգսյանի**` Ադրբեջանի ներկա ռազմական պոտենցիալի վերաբերյալ օրերս բարձրաձայնված գնահատականի որոշ թվեր պետք է փոխանցեմ, որպեսզի հասկանանք մեր թշնամու եւս մեկ անգամ պատերազմի մեջ մտնելու հնարավորությունները: Տվյալները, որոնք ներկացնում է փորձագետ-վերլուծաբանը, քաղված են բաց աղբյուրներից, համադրված եւ նույնականացված են եւ 90 տոկոսով համադրելի են իրականության հետ:

Դրանք Ադրբեջանի անցած տարվա ռազմական ներուժն են ներկայացնում, այս տարի դրանց ավելացել են նոր պայմանագրեր, Իսրայելից հրթիռային համակարգերի պատվերներ: Նախապես փոխանցենք Արայիկ Սարգսյանի եզրափակիչ գնահատականը, որոնք նա արել է առկա թվերի վերլուծության արդյունքում. Ադրբեջանի ռազմական պոտենցիալի ներկա առկայության եւ տարածաշրջանային ռազմաքաղաքական հավասարակշռության պարագայում` ապրիլին (կամ` մոտակա ժամանակաշրջանում) պատերազմի հավանականություն չկա: Ըստ նրա` այդպիսի պոտենցիալով պատերազմ կարող է սկսվել միայն քաղաքական հրահանգով (ասենք` Պուտինի, Էրդողանի, ՆԱՏՕ-ի ղեկավարի կամ այլ տարածաշրջանային խաղացողների), իսկ բուն ադրբեջանական կողմին այս վիճակում պատերազմը ձեռնտու չի կարող լինել, քանի որ Ադրբեջանը գերակայող ռազմական առավելություն չունի նախ, եթե ռազմական պոտենցիալը չավելացնի արագացված ձեւով:

Համեմատել է պետք նաեւ բարոյահոգեբանական վիճակը` զինվորի մոտիվացիան, զինվորների մարտական պատրաստվածությունը. հիմա պատերազմ վարելու ձեւերն ու միջոցներն են փոխվել, օդատիեզերական ուժերի տեղեկատվության փոխանցումն ու ընդհանուր հրամանատարական կետ ձեւավորելու ունակությունն են կարեւորվելու, նոր զինատեսակների եւ նոր տեխնոլոգիաների տիրապետումը: Հետո` ադրբեջանցիք զավթողական պատերազմ են մղելու, մերոնք` հայրենիքի պաշտպանության: Միջազգային դաշնակիցների հետ հարաբերություններն էլ են կարեւոր, դրանց խելացի համադրումը: Մի խոսքով, ըստ փորձագետի, ողջամիտ վերլուծությունը հանգեցնում է նրան, որ այս պահին նախ Ադրբեջանի շահից չի բխում պատերազմը Հայաստանի հետ, երկրորդ` այդպիսի տարածաշրջանային- ռազմաքաղաքական որոշում չկա: Իսկ թե ինչից ելնելով են ե՛ւ Հայաստանի ներկա իշխանությունը, ե՛ւ ընդդիմությունը ամեն օր վախեցնում մեր բնակչությանը պատերազմով` առանձին վերլուծության նյութ է:

Շատ չծավալվենք, այլ ներկայացնենք թշնամու ռազմական պոտենցիալն ու մարդուժը` փորձագետի մատնանշած թվերով եւ տեղակայման վայրերով, որոնք ամեն մեկիս օգտակար է իմանալ:

Ադրբեջանի բնակչության թիվը փաստացի 9 մլն-ի կարգի է (պաշտոնապես ավելի մեծ թիվ է նշվում): Այդ բնակչությամբ երկրից ամեն տարի զորակոչվում է 130 հազար զինվոր, կամ բնակչության 1,5 տոկոսը: Զինվորական ծառայության մեջ գտնվողների ընդհանուր թիվը 330 հազար է (այս թվի մեջ են պահեստազորը, վետերանները, ՊՆ անձնակազմը) կամ բնակչության 3,7 տոկոսը: Կոնկրետ` գործող բանակի թվակազմը 65 հազար է կամ բնակչության 0,6 տոկոսը: Վարչական թվակազմը գումարած` 83 հազար, որից 1200-ը կին են:




Ադրբեջանի ռազամկան բյուջեն 3,7 մլրդ դոլար էր 2023 թվականին, կամ ՀՆԱ-ի 6,5 տոկոսը, սա ահռելի թիվ է:

Ռազմաօդային ուժերի կազմում զբաղված են 7 հազ.200 զինվոր ու սպա: Ազգային գվարդիայում`2,5 հազ., սահմանապահ ծառայությունում` 5 հազ., ներքին զորքերում`12 հազ. զինծառայող են ներգրավված:

Ցամաքային զորքը` 35 հազար զինծառայողով, կազմված է 6 բանակային զորամիավորումներից , որոնք տեղակայված են Բարդայում (Աղդամի մոտ`5 հազ. զինվոր), Բեյլեվանում (էլի Արցախին մերձ` 6 հազ. զինվոր), Շամխորում (5 հազ. զինվոր), Ապշերոնում (3 հազ. 800 զինվոր), Նախիջեւանում (8 հազ. զինվոր): Բաքվի մոտակայքում է տեղակայված վեջին արցախյան պատերազմին մասնակցածների պահեստազորը` 7 հազ. թվակազմով, որոնց **Ալիեւը** չի զորացրել, այլ որպես վարձկան պահում է: Գոյություն ունի նաեւ Յաշմա զորամիավորում, որն ուղղվում է Բաքվի ղեկավարությանն ու գենշտաբին պաշտպանելու:

Ադրբեջանի ռազմաօդային ուժերում զբաղված է 7 հազ.200 մարդ: Հիմնական ավիաբազաները տեղակայված են Նասոսնի (Բաքվին մոտիկ` այստեղ մարտական ինքնաթիռներ եւ ռմբակոծիչներ են), Քալայ, Բարդա (սա հատկապես ուղղված է Հայաստանի դեմ, ինչպես նաեւ` Եվլախինը), Դալյար, Գյանջա, Եվլախ, Ֆիզուլի-Ջանգելան, Քյուրդամիր, Լենքորան (Իրանի դեմ) բնակավայրերում:

Ադրբեջանի ՊՆ-ի տրամադրության տակ են 148 ռազմական ինքնաթիռ եւ ուղղաթիռ.17 կործանիչ,11 ռմբակոծիչ, 2 տրանսպորտային ինքնաթիռ, 32 ուսումնական ինքնաթիռ, 86 ուղղաթիռ (այս թիվը գուցե ավելի քիչ է, քանզի ռուսական կողմից գնված ուղղաթիռների մի մասը դեռ չի մատակարարվել):

Ադրբեջանի ռազմական հաշվեկշռում են 520 տանկ, 167 ինքնագնաց հրետանային համակարգեր, 319 քարշակ հրետանային համակարգեր, 320 համալիր հրետանային համակարգեր, 4 սուզանավ, 13 պարեկային նավ, ցամաք-օդ 70-80 խորհրդային ժամանակի հրթիռ: Արդեն այս տարի Ադրբեջանը 10 մլրդ.700 մլն. դոլարի հրթիռային համակարգեր է պատվիրել Իսրայելից:

Իհարկե, այս թվերը միայն մասնագետները կարող են բաղդատել կամ համադրել մեր ներուժի առումով, սակայն թվերն իմանալը կարեւոր է, հատկապես հասկանալու համար, թե ո՞վ եւ ինչո՞ւ է մեզ պատերազմով վախեցնում:

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

# Արմանուշ Կոզմոյանի «Իրանագիտական հետազոտությունները»




Վաստակաշատ բանասեր, իրանագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արմանուշ Կոզմոյանը** մեկ հատորով ամփոփել է տարիների իր գիտական հունձքը՝ «Իրանագիտական հետազոտություններ» ընդհանուր խորագրի ներքո (ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ, 2024):

Արմանուշ Կոզմոյանի հայերեն եւ ռուսերեն ուսումնասիրություններից նույն հատորում ընդգրկվել են 45-ը (հոդվածներ, ակնարկներ, գրախոսականներ, խմբագրականներ, նաեւ հարցազրույց), որոնք վերաբերում են պարսից գրականության պատմությանը, ժանրային ձեւերի զարգացման խնդիրներին, հայ-իրանական պատմամշակութային կապերին, հայ իրանագիտությանը, գրականագիտության եւ աղբյուրագիտական այլեւայլ հարցերին: Ընտրված աշխատությունները անդրադառնում են ինչպես նեղ մասնագիտական խնդիրների, այնպես էլ համընդհանուր թեմաների, ուստի եւ նույն ժողովածուն հետաքրքրական կլինի թե՛ մասնագետների, թե՛ ընթերցող լայն շրջանակների համար:

Բազմաթիվ ուշագրավ եւ ուսանելի նյութերի շարքին հիշենք «Մշակութային կողոպուտ կամ պատասխան Արիֆ Հաջիեւին» հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացրել է Ադրբեջան արհեստածին պետության «գիտնականների» կողմից պարսիկ մեծ բանաստեղծ **Նիզամիին** ադրբեջանցի ներկայացնելու եւ նրա «Խոսրով եւ Շիրին» վիպերգի հայ հերոսուհու ազգությունն աղավաղելու պատմությունը՝ ցույց տալով դրա սնանկությունն ու հանցավոր բնույթը:

Արեւելագիտության համար չափազանց կարեւոր բացահայտումներ են մասնավորապես Կոզմոյանի կատարած հայ եւ պարսից միջնադարյան բանաստեղծության համեմատական քննությունները (օրինակ, Նարեկացու եւ Ռուդաքիի), Ղուրանի միջնադարյան հայերեն թարգմանությունների վերաբերյալ ուսումնասիրությունները եւ այլն, իսկ լայն ընթերցողի համար՝ իրանական մշակույթի մասին ընդհանուր ակնարկը, նրա զարգացման համայնապատկերը՝ միջնադարյան արվեստից մինչեւ կինոարվեստ՝ շատ հետաքրքրական:

Գրքի էջերում կարելի է գտնել բազմաթիվ կարեւոր մտքեր, ընդհանրացումներ: Մեջբերենք հեղինակի բնութագիրը թարգմանական արվեստի մասին. *«Թարգմանությունը դիալեկտիկական երեւույթ է, հետեւաբար այն նույնպես հնանալու հատկություն ունի: Փոփոխվում են հոգեւոր արժեքների գեղագիտական չափանիշները, փոխվում, զարգանում են պոետիկայի լեզուն եւ ոճը: Թարգմանիչներն էլ իրենց ժամանակի արդյունքն են եւ յուրովի են ըմբռնում եւ մեկնաբանում բնագիրը: Նույն բանաստեղծին թարգմանում են շատերը, սակայն երբեք իրար չեն կրկնում: Բազմաթիվ հաջողված թարգմանություններ զարգացման երկար ճանապարհ են անցել: Այդ պատճառով էլ ամեն մի սերունդ իրավունք ունի նորից ու նորից անդրադառնալու դասականների թարգմանությանը, քանի որ թարգմանչի վարպետությունից, բանաստեղծական տաղանդից է կախված ոչ միայն սեփական ժողովրդի ճանաչողության սահմանների ընդլայնումը, այլեւ թարգմանվող հեղինակի հետագա ճակատագիրը: .....Իսկական թարգմանիչը պետք է դուրս գա լեզվաբանական ճշմարտացիության սահմաններից եւ արտահայտի էքնոմշակութային ճշմարտացիությունը»* (էջ 136, 139):

Արմանուշ Կոզմոյանը 1967 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը, 1971-1974 թվականներին սովորել ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Մերձավոր եւ Միջին Արևելքի գրականությունների բաժնում, 1974 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում: Դասավանդել է երեւանյան մի քանի բուհերում: Հեղինակ է ութ գրքի եւ յոթ տասնյակից ավելի գիտական հրատարակությունների՝ «Քառյակը պարսկալեզու դասական պոեզիայում X-XII դդ.» (1981, ռուսերեն), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան» (X-XVI դդ.) (1997), «Ղուրանը հայոց մեջ» (2003) եւ այլն: Նրա թարգմանությամբ առանձին հատորներով լույս են տեսել նաեւ պարսիկ միջնադարյան խոշորագույն բանաստեղծներ Բաբա Թահերի, Հաֆեզի, Ռուդաքիի, Օմար Խայամի եւ այլոց ստեղծագործությունները՝ հայ բանաստեղծների (Սիլվա Կապուտիկյան, Գեւորգ Էմին, Վահագն Դավթյան, Արամայիս Սահակյան) համագործակցությամբ:

Ի դեմս Արմանուշ Կոզմոյանի «Իրանագիտական հետազոտությունների»՝ ասպարեզի վրա ունենք մի բացառիկ աշխատություն, որի թարգմանությունը պարսկերեն, նաեւ՝ անգլերեն, խիստ անհրաժեշտ է մեր օրերում՝ ոչ միայն հայ գիտական միտքն աշխարհին ներկայացնելու, այլեւ գիտության կեղծարարներին արժանի պատասխան տալու առումով:

**Ա. Բ.**

# Շահրամանյանն՝ «առաջին պլանում». ի՞նչ է «հասկացնում» Ռուսաստանը

Մարտի 19-ին Հայաստանում Ռուսաստանի դեսպանատունը ֆիլմի ցուցադրություն էր կազմակերպել: «Ականատես» կինոժապավենը տեսնելու հրավերով «Մոսկվայի տուն» (ցուցադրությունն այնտեղ էր) էին եկել հայաստանյան քաղաքական դաշտի «պրոռուսական» ուժերի ներկայացուցիչները՝ ՀՀԿ-ից **Էդուարդ Շարմազանովը**, «Հայաստան» խմբակցությունից՝ **Սեյրան Օհանյանը**, Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամները:

Միջոցառմանը ներկա էր նաեւ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր **Ալեքսեյ Սանդիկովը**: Թեեւ ընդդիմությունը Նիկոլ Փաշինյանի իշխանությանը մեղադրում է «արեւմտամետության» մեջ, բայց դեսպանատան հրավերը չբոյկոտելը ճիշտ հակառակի մասին է վկայում: Ավելին, Փաշինյանին ու թիմակիցներին «հակառուս» անվանող ընդդիմադիր քաղգործիչներն, առանց ավելորդ ձայն-ծպտունի, դահլիճում հարմար տեղավորվեցին հենց ՔՊ-ականի կողքին:

Առավել ուշագրավ էր Արցախի նախկին նախագահ **Սամվել Շահրամանյանի** ներկայությունը: «**Ազգ**»-ի տեղեկություններով՝ հյուրերի հարցում դեսպանատունն անձամբ է զբաղվել: Եվ Շահրամանյանին բերել, «առաջին» պլանում նստեցնելը պատահական լինել չէր կարող: Եթե սրան հավելենք դեսպան **Սերգեյ Կոպիրկինի՝** ֆիլմի



ցուցադրությունից առաջ ասած խոսքը, թե «այստեղ հավաքվածները Ռուսաստանի ընկերներն են», թերեւս կարող ենք եզրահանգել՝ Կրեմլը ինչ-ինչ «մեսիջներ» է տալիս՝ նաեւ Ադրբեջանին:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Գյուղական մանկապարտեզը ջեռուցվում է արեւի էներգիայով

Տարիներ շարունակ Արմավիրի մարզի Արմավիր գյուղի մանկապարտեզը ձմռանը հարկադրված աշխատել է... պարապուրդի ռեժիմով: Հարյուր տարի առաջ կառուցված՝ ֆունկցիոնալ այլ նշանակության շենքը բարձր առաստաղ ունի:Ներսում բավարար ջերմություն ապահովելու համար շատ էներգիա սպառելու անհրաժեշտություն է լինում: Չնայած մարզի համեմատաբար մեղմ կլիմային՝ գազով աշխատող կաթսաները զգալի ծախսեր են պահանջում: Էլեկտրական սալիկներից ու վառարաններից օգտվելն էլ ապահով չէ փոքրիկների համար: Այդ ամենը, սակայն, արդեն անցյալում է:

Արմավիր գյուղը գտնվում է Հայաստանի Արմավիրի մարզում: Մայրաքաղաք Երեւանից հեռու է 57 կմ, Արմավիր քաղաքից՝ 7-9 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից 850 մետր է: Գյուղը հիմնադրվել է 1613թ., բնակչությունը կազմում է 2989 մարդ (2008թ.):

Արմավիրը աչքի է ընկնում չոր, կիսաանապատային տոթ ու շոգ բնակլիմայական պայմաններով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է +38 - +41 ´C, իսկ ձմեռները ջերմաստիճանը իջնում է մինչեւ -21 - -28 ´C: Գյուղում մշտապես առկա էր խմելու ջրի խնդիր: Վերջին 60 տարիների ընթացքում այս խնդիրը լուծված է բնակչության խմելու ջրի ապահովումը կազմակերպելով արտեզյան ջրհորերից քաղցրահամ ջրի մատակարարման միջոցով: Ընդհանուր հողատարածքը 720-780 հեկտար է: Սահմանակից է Արմավիրի մարզի Հայկավան, Այգեշատ, Ջրաշեն, Արեւիկ եւ Ալաշկերտ գյուղերին, Արմավիր քաղաքի եւ Մարգարայի հետ կապված է Արմավիր-Մարգարա մայրուղով, համայնքների հետ՝ միջհամայնքային ճանապարհներով: Գյուղի վարչական տարածքով է անցնում Արմավիր-Մրգաշատ մեծ թողունակության ջրատարը:

Վիվա-ՄՏՍ-ի ու Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) ջանքերով այս տարվանից մանկապարտեզում գործում է արեւային ֆոտովոլտային կայան՝ զրոյացնելով էներգիայի ծախսերը: Կայանն ունի 22.5 ԿՎտ հզորությամբ արեւային վահանակներ եւ 21 կՎտ դրվածքային հզորությամբ աշխատող էլեկտրական երկու կաթսա: Արտադրած էներգիան թույլ է տալիս ապահովել մանկապարտեզի բնականոն աշխատանքը եւ անգամ նոր խումբ բացելու հնարավորություն ստեղծում: Տարեկան հնարավոր է արտադրել ավելի քան 30 հազար կՎտժ էլեկտրական էներգիա եւ խնայել մոտ վեց տոննա օրգանական վառելիք:

Նման ծրագրերը չափազանց կարեւոր են Հայաստանում ավելի կայուն ու ամուր համայնքներ զարգացնելու համար: Ուրախալի է, որ արեւային կայանի շնորհիվ մանկապարտեզի ծրագրերը կախված չեն լինի ալեւս եղանակային պայմաններից:

Հայաստանի մարզերում իրականացվող բնապահպանական այսօրինակ ծրագրերով Վիվա-ՄՏՍ-ն ու Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը նվազեցնում են գյուղական համայնքների ծախսերը:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
**Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր**

## Կորել է

**Հակոբ Դանիելի Ավետիքյանի** ՀՀ անձնագիրը, տրված 25.07.22-ին 010-ի կողմից, AV0332340 համարով:

Համարել անվավեր:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թէքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 20.03.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: